ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 մայիսի 2016 թվականի **թիվ 9** քաղ. Երևան

«2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարեկան հաշվետվության վերաբերյալ

Հաշվի առնելով 2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարեկան հաշվետվության մասին տեղեկատվությունը՝

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ շարունակել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի՝ կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու ընթացակարգի կատարելագործման աշխատանքները:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարեկան հաշվետվություն «2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին»

Հապավումների ցանկ **4**
Ներածություն **5**
Գլուխ 1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման՝ նորմատիվ-իրավական, կազմակերպական, մեթոդական եւ տեղեկատվական-տեխնիկական բազայի ձեւավորման եզրափակումը **13**
1.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման հարցերով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի գործունեության կարգը եւ կազմակերպումը 15
1.2. Կարգավորման ազդեցության գնահատման անցկացման ժամանակ կիրառվող փաստաթղթերի ձեւերը եւ դրանք կազմելու կանոնները 27
1.3. Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքի այն ծառայությունների ներդրում, որոնք անհրաժեշտ են կարգավորման ազդեցության գնահատման իրականացումն ապահովելու համար 38
1.4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու առանձնահատկությունները իրավասության առանձին ոլորտներում 42
1.4.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ (Միության տեխնիկական կանոնակարգերի եւ դրանց կից ստանդարտների ցանկերի նախագծերը) 42
1.4.2. Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտը 48
1.4.3. Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային միջոցների կիրառման ոլորտը 52
Գլուխ 2. 2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու պրակտիկայի մասին վիճակագրական եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկություններ **56**
2.1. ԵՏՀ որոշումների նախագծերի մասին տեղեկությունների վերլուծություն, որոնց հիման վրա իրականացվել է կարգավորման ազդեցության գնահատումը 56
2.2. Մշակող դեպարտամենտների կողմից կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլի իրականացման պրակտիկայի մասին տեղեկությունների վերլուծություն 62
2.3. ԵՏՀ որոշումների նախագծերում ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելցուկային սահմանափակումներ նախատեսող դրույթների բացահայտման մասին տեղեկատվության վերլուծություն 67

Գլուխ 3. Դիտանցում անցկացնելու արդյունքներով հայտնաբերված խնդիրները եւ դրանց լուծման վերաբերյալ առաջարկները 78

3.1. Կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ 78

3.1.1. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելիս օգտագործվող փաստաթղթերի ձեւերի եւ դրանց կազմման կանոնների ճշգրտման անհրաժեշտությունը 78

3.1.2. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու կազմակերպական եւ տեղեկատվական-հեռահաղորդակցական պայմանների հնարավոր բարելավումները 80

3.1.3. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու կարգի հնարավոր փոփոխությունները 82

3.1.4. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու մեթոդաբանության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ 85

3.2. Ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պիլոտային նախագծի իրագործման վերաբերյալ առաջարկություններ 86

Եզրակացություն 88

Հապավումների ցանկ

Միություն	Եվրասիական տնտեսական միություն
Հանձնաժողով, ԵՏՀ	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
ԿԱԳ	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում
Հաշվետվություն	«2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարեկան հաշվետվություն
Կանոնակարգ	Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգ
Աշխատանքային խումբ	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի մարտի 31-ի թիվ 25 որոշմամբ ստեղծված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման հարցերով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խումբ
Փաստաթղթաշրջանառության կանոններ	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 46 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոններ
Մշակող դեպարտամենտ	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագիծը նախապատրաստելու համար պատասխանատու՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտ կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտ, որի իրավասության շրջանակներում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության պետական իշխանության մարմնի առաջարկության հիման վրա Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի նախապատրաստումը
Համահավաք դեպարտամենտ	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ, որն իրականացնում է կարգավորման ազդեցության գնահատման անցկացման մեթոդական ապահովումը եւ խորհրդատվական ուղեկցումը:

Ներածություն

Կարգավորման ազդեցության գնահատումը (անգլերենից՝ Regulatory Impact Assessment, Regulatory Impact Analysis) կարգավորման խնդիրների եւ նպատակների, այդ նպատակներին հասնելու այլընտրանքային միջոցների որոշման այնպիսի գործընթաց է, որի նպատակն ավելորդ եւ չկշռադատված կարգավորումները բացառելն է, եւ որի ժամանակ օգտագործվում են գիտական ու հետագա ստուգման ենթարկվող այնպիսի տեխնիկաներ, որոնք կիրառվում են առկա հասանելի ամբողջ տեղեկատվության մասով, ինչպես նաեւ դրա ընթացքում հաշվի են առնվում խորհրդատվության ժամանակ ստացված տարբեր կարծիքները, ընտրված այլընտրանքային միջոցների հետ կապված ծախքերի եւ օգուտների վերլուծությունը:

Կարգավորման ազդեցության գնահատումը նաեւ կարելի է բնորոշել որպես իշխանության մարմինների գործունեություն, որի նպատակը նորմատիվ իրավական ակտի նախագծի ընդունման հնարավոր դրական եւ բացասական հետեւանքների որոշումը եւ գնահատումն է՝ հիմնված խնդրի վերլուծության, դրա կարգավորման նպատակների եւ լուծման հնարավոր միջոցների վրա, ինչպես նաեւ նորմատիվ իրավական ակտի նախագծում ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության ոլորտում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար ավելորդ պարտավորություններ, արգելքներ եւ սահմանափակումներ նախատեսող կամ դրանց կիրառմանը նպաստող դրույթների, ինչպես նաեւ ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության ոլորտում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար անհիմն ծախսերի եւ բյուջետային ծախսերի առաջացմանը նպաստող դրույթների բացահայտումն է:

Եվրոպական միության մակարդակով՝ կարգավորման միջավայրի բարելավմանն ուղղված համակարգված ջանքերն սկսել են գործադրվել դեռեւս 1980-ականների սկզբներին: Եվրոպական հանձնաժողովում ազդեցության գնահատումն առաջին անգամ՝ բիզնեսի վրա ազդեցության գնահատման

ձեւաչափով (Business Impact Assessment System, BIA) ներդրվել է 1986 թվականին՝ Եվրամիությունում Մեծ Բրիտանիայի նախագահության ժամանակ եւ փաստացի պատճենել է համապատասխանության ապահովման ծախքերի գնահատման բրիտանական մոդելը (*Compliance Cost Assessment)*:

Գնահատումն ուներ սահմանափակ շրջանակ, այսինքն՝ տարածվում էր կարգավորումների (նախագծերի) սահմանափակ թվի վրա եւ դրանով չափվում էին այսպես կոչված կարգավորման պահանջների կատարման (օրենսդրության պահանջների պահպանման) ծախքերը:

1989 թվականից գնահատում անցկացնելու իրավասություն է ունեցել ձեռներեցության վերաբերյալ քաղաքականության հարցերով XXIII Եվրոպական հանձնաժողովի գլխավոր տնօրենը (*DG Enterprise)*, որը վերազգային նորմատիվ իրավական ակտերի նախագծեր էր ընտրում բիզնեսի վրա դրանց ազդեցության գնահատումն անցկացնելու համար:

Հետագայում ԿԱԳ համակարգը Եվրոպական հանձնաժողովում բազմիցս արդիականացվել է, մինչեւ որ 2002-2003 թվականներին ամբողջովին փոխարինվել է ազդեցության համալիր գնահատման համակարգով (Integrated Impact Assessment), որը տեսականորեն ուղղված է ոչ միայն տնտեսական, այլ նաեւ սոցիալական եւ էկոլոգիական հետեւանքները հաշվի առնելուն:

Տվյալ միասնական մոտեցման լիարժեք իրականացումն ապահովելու բարդության պատճառով Եվրոպական հանձնաժողովը զուգահեռաբար օգտագործում է այնպիսի մոտեցումներ, որոնք ուղղված են վարչարարական խոչընդոտների նվազեցմամբ պայմանավորված՝ հատկապես տնտեսական ծախքերի չափմանը՝ ըստ ստանդարտ ծախքերի մոդելի:

Ներկայումս կարգավորման ազդեցության գնահատման (կարգավորիչ ազդեցության վերլուծության) ընթացակարգն այս կամ այն կերպ (նորմատիվ իրավական ակտերի վերազգային եւ (կամ) ազգային նախագծերի մասով) նախատեսված եւ ներդրված է Միության բոլոր անդամ պետություններում:

Հարկ է նշել, որ Միության մասին պայմանագրի թիվ 1 հավելվածը հանդիսացող «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ Հանձնաժողովի մասին հիմնադրույթ) 13-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի որոշումները՝

- ունեն նորմատիվ իրավական բնույթ եւ Միության իրավունքի մաս են կազմում.

- պարտադիր են Միության անդամ պետությունների համար.

- Միության անդամ պետությունների տարածքում ենթակա են անմիջական կիրարկման:

Այդպիսով, Հանձնաժողովին Միության անդամ պետությունների կողմից վերազգային մակարդակով պատվիրակվել են այնպիսի նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություններ, որոնք հասցեագրված են տնտեսավարող սուբյեկտներին եւ ազդում են նրանց կողմից տնտեսական գործունեություն իրականացնելու պայմանների վրա, այդ առումով հիմնավորված անհրաժեշտություն է առաջացել անցկացնելու Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգ:

Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 15-րդ կետով սահմանվել է, որ Հանձնաժողովի այն որոշումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանների վրա, ընդունվում են՝ հաշվի առնելով այդ որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման արդյունքները:

Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում ասելով հասկացվում է Հանձնաժողովի որոշումների՝ ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա հնարավոր ազդեցություն ունեցող նախագծերի նախապատրաստման պարտադիր փուլ, որն ուղղված է Հանձնաժողովի որոշումների նախագծերի դրույթներով նախատեսված կամ այդ դրույթների մասով առաջացած՝ հետեւյալների բացահայտմանն ու վերացմանը՝

- ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելորդ պարտավորություններ, սահմանափակումներ եւ (կամ) արգելքներ.

- ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների չհիմնավորված ծախսեր.

- Միության տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի հետ կապված խոչընդոտներ:

Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 43-րդ կետի 16-րդ ենթակետին համապատասխան՝ Հանձնաժողովի կոլեգիայի գործառույթներին եւ իրավասությունների շրջանակներում է կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի՝ սահմանված կարգով իրականացումը եւ այդ ընթացակարգի իրականացման դիտանցման մասին տարեկան հաշվետվության պատրաստումը:

Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 24-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի իրականացման դիտանցման մասին տարեկան հաշվետվությունը Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանն է ներկայացվում Հանձնաժողովի խորհրդի կողմից:

Հանձնաժողովի մասին հիմնադրույթով (15-րդ կետ) նաեւ նախատեսվում է, որ Հանձնաժողովի որոշումների այն նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացման կարգը, որոնք կարող են ազդեցություն գործել ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա, սահմանվում է Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով:

Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգը հաստատված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ, որի համաձայն, Հանձնաժողովի խորհրդի եւ կոլեգիայի նիստերի վերաբերյալ փաստաթղթերի եւ նյութերի լրակազմում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները ներառելու մասին պահանջները գործողության մեջ են դրվել 2015 թվականի ապրիլի 1-ից:

Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման կարգը կարգավորվում է Կանոնակարգի IX բաժնով, որը նաեւ ներառում է «Կարգավորման ազդեցության գնահատման անցկացման դիտանցման մասին ամենամյա զեկույց» 4-րդ ենթաբաժինը:

Կանոնակարգի 171-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի՝ կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին Հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը 2015 թվականին նախապատրաստվել է Հանձնաժողովի ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտի կողմից (Համահավաք դեպարտամենտի կողմից):

Հաշվետվությունը նախապատրաստվել է 2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման գործելակերպի հիման վրա եւ դրանում հաշվի է առնվել տեղեկատվական-վերլուծական, վիճակագրական եւ այլ տեղեկատվություն, որը տրամադրվել է՝

- կարգավորման ազդեցության վերջնական գնահատման փուլի անցկացումը (կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացության նախապատրաստում) ապահովող՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու հարցերով՝ Հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից.

- Աշխատանքային խմբի տեղեկատվական-վերլուծական եւ կազմակերպական-տեխնիկական գործունեության ապահովումը, ինչպես նաեւ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու մեթոդական ապահովումը եւ խորհրդատվական ուղեկցումն իրականացնող Համահավաք դեպարտամենտի կողմից.

- Հանձնաժողովի դեպարտամենտների (Մշակող դեպարտամենտներ) կողմից, որոնք ապահովում են կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման այն փուլի անցկացումը, որի ընթացքում իրականացվում է

Հանձնաժողովի որոշման նախագծի մշակումը, տեղեկատվական վերլուծական տեղեկանքի եւ հարցաթերթիկի կազմումը, Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկումը, հանրային քննարկման ժամանակ ներկայացված առաջարկների մասին ամփոփ տեղեկատվության կազմումը.

- կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացման շրջանակներում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման անցկացմանը մասնակցող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչների (ձեռնարկատիրական միավորումների եւ տնտեսավարող սուբյեկտների) կողմից:

Կանոնակարգի 172-րդ եւ 173-րդ կետերին համապատասխան՝ Հաշվետվությունը ներառում է՝

- կարգավորման ազդեցության գնահատումն անցած՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի թվի, ինչպես նաեւ՝ դրա անցկացման արդյունքների մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերում հայտնաբերված այն դրույթների թվի մասին, որոնցով ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար նախատեսվում են ավելորդ պարտավորություններ, սահմանափակումներ եւ (կամ) արգելքներ, ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների մասով չհիմնավորված ծախսեր, ինչպես նաեւ որոնցով Միության տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար խոչընդոտներ են ստեղծվում.

- Մշակող դեպարտամենտների կողմից Կանոնակարգով սահմանված՝ կարգավորման ազդեցության գնահատման անցկացման կարգին չհետեւելու դեպքերի մասին տեղեկությունները.

- կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները.

կանոնակարգի IX բաժնով սահմանված՝ կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու կարգը.

կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելիս օգտագործվող փաստաթղթերի ձեւերը եւ դրանք կազմելու կանոնները, որոնք սահմանված են ԵՏՀ կոլեգիայի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 46 որոշմամբ հաստատված՝ Ներքին փաստաթղթաշրջանառության կանոնների թիվ 5 հավելվածով.

կարգավորման ազդեցության գնահատման անցկացումն ապահովող կազմակերպական-տեխնիկական եւ տեղեկատվական-վերլուծական միջոցները, այդ թվում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Միության պաշտոնական կայքում ներկայացված ծառայությունները.

- Հանձնաժողովի ընդունած այն որոշումների ուսումնասիրությանն ուղղված աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունները, որոնք ունեն կամ կարող են բացասական ազդեցություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա.

- վիճակագրական եւ տեղեկատվական-վերլուծական բնույթի այլ տեղեկություններ:

Հաշվետվությունը կազմված է ներածությունից, պարբերությունների եւ ենթապարբերությունների բաժանված երեք գլուխներից, ինչպես նաեւ եզրակացությունից:

Հաշվետվության առաջին գլխում բերված են 2015 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովի կողմից անցկացված՝ նորմատիվ-իրավական, կազմակերպչական, մեթոդական եւ տեղեկատվական-տեխնիկական այն բազայի ձեւավորման ավարտման հետ կապված աշխատանքների մասին տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման համար:

Հաշվետվության երկրորդ գլուխը ներառում է 2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման գործելակերպի վերաբերյալ վիճակագրական եւ տեղեկատվական-վերլուծական տվյալներ:

Հաշվետվության երրորդ գլխում շարադրված է դիտանցման արդյունքում հայտնաբերված խնդիրների մասին տեղեկատվությունը եւ դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ:

Գլուխ 1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման՝ նորմատիվ-իրավական, կազմակերպական, մեթոդական եւ տեղեկատվական-տեխնիկական բազայի ձեւավորման եզրափակումը

Կանոնակարգի 148-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացումը կազմված է հետեւյալ փուլերից՝

1) **ընթացիկ գնահատում՝** Հանձնաժողովի որոշման նախագծի մշակում, ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի եւ Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկում անցկացնելու համար հարցաթերթիկի կազմում, ինչպես նաեւ դրանց հրապարակային քննարկում (լրացում).

2) **վերջնական գնահատում՝** կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստում:

Մշակող դեպարտամենտների կողմից ապահովվող՝ կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլի անցկացումն ապահովելու համար՝ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից հաստատվում են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի, հարցաթերթիկի եւ հանրային քննարկման ընթացքում ստացված առաջարկությունների մասին ամփոփ տեղեկատվության ձեւերը, ինչպես նաեւ սահմանվում են դրանք կազմելու կանոնները (նշված ձեւերի եւ կանոնների մասին տեղեկատվությունը ներկայացված է 1.2 պարբերության մեջ):

Հաշվի առնելով այն, որ վերջնական գնահատման փուլի (ԿԱԳ-ի մասին եզրակացությունների նախապատրաստման) իրականացման համար Հանձնաժողովին հանձնարարվել է ստեղծել հատուկ աշխատանքային խումբ՝ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից այդպիսի աշխատանքային խումբ ստեղծվել է,

հաստատվել է դրա կազմը եւ «Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթը, որով որոշվում է դրա գործունեության կարգը (Աշխատանքային խմբի գործունեության կանոնակարգման եւ գործելակերպի մասին տեղեկատվությունը ներկայացված է 1.1- պարբերության մեջ):

Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի անցկացման՝ տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքների դեր են կատարում համապատասխան ծառայությունները եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Միության պաշտոնական կայքի բովանդակությունը (Միության պաշտոնական կայքի համապատասխան ծառայությունների ներդրման եւ կատարելագործման մասին տեղեկությունները ներկայացված են 1.3 պարբերության մեջ):

Կանոնակարգի 149-րդ եւ 150-րդ կետերով նախատեսված է, որ ոչ սակագնային կարգավորման ոլորտում եւ սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառման բնագավառում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի անցկացման ժամանակ Կանոնակարգի՝ ընթացիկ գնահատման փուլի վերաբերյալ պահանջներն այդ նախագծերի վրա չեն տարածվում, իսկ դրանց հանրային քննարկումն անցկացվում է Հանձնաժողովի առանձին որոշումներով հաստատվող հատուկ կարգով (նշված որոշումների մասին տեղեկատվությունը ներկայացված է 1.4.2 եւ 1.4.3 ենթապարբերություններում):

Կանոնակարգի 151-րդ կետի համաձայն՝ Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի եւ դրանց կից ներկայացվող ստանդարտների ցանկերի մասով՝ ԿԱԳ ընթացակարգի բոլոր փուլերն անցկացվում են ոչ թե Կանոնակարգի IX բաժնի պահանջներին համապատասխան, այլ Հանձնաժողովի առանձին որոշումներով սահմանված կարգով (այդ որոշումների նախագծերի մշակման ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացված է 1.4.1 ենթապարբերության մեջ):

1.1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման հարցերով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի գործունեության կարգը եւ կազմակերպումը

Կանոնակարգի 165-րդ կետի 1-ին պարբերությանը համապատասխան՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստումն իրականացնում է Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման հարցերով՝ Հանձնաժողովի աշխատանքային խումբը:

Վերջնական գնահատման փուլի շրջանակներում՝ ԿԱԳ-ի մասին եզրակացության նախապատրաստման կարգը ներկայացված է 1-ին գծապատկերում:

Գծապատկեր 1



Կանոնակարգի 143-րդ կետի համաձայն՝ Աշխատանքային խմբի գործառույթների մեջ է մտնում նաեւ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման անհրաժեշտության մասին հարցերի ուսումնասիրությունը՝ այն դեպքում, երբ Մշակող դեպարտամենտի եւ Համահավաք դեպարտամենտի միջեւ տվյալ հարցերի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել:

Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման անհրաժեշտության մասին հարցերի քննարկման կարգը ներկայացված է 2-րդ գծապատկերում:

Գծապատկեր 2



Կանոնակարգի 164-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսվում է, որ Աշխատանքային խմբի կազմը եւ դրա մասին հիմնադրույթը հաստատվում են Հանձնաժողովի կոլեգիայի կողմից:

Համահավաք դեպարտամենտի կողմից նախապատրաստվել եւ Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի մարտի 31-ի թիվ 25 որոշմամբ հաստատվել է «Աշխատանքային խմբի եւ դրա կազմի մասին» հիմնադրույթը:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթով սահմանվում են կազմակերպման գործընթացում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների փոխգործակցության կանոնները եւ Աշխատանքային խմբի գործունեությունը:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթով սահմանվում է այն, որ Աշխատանքային խմբի կազմի մեջ մտնում են Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների պաշտոնատար անձինք եւ Միության յուրաքանչյուր անդամ պետության գործարար համայնքի համակարգողներից մեկական ներկայացուցիչ:

Աշխատանքային խումբը կազմված է 31 անդամից, որոնցից 27-ը Հանձնաժողովի ներկայացուցիչներ են եւ 4-ը՝ Միության անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչներ:

Հանձնաժողովից՝ Աշխատանքային խմբի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Կոլեգիայի՝ էկոնոմիկայի եւ ֆինանսական քաղաքականության հարցերով անդամը (նախարարը) (Աշխատանքային խմբի ղեկավարը) եւ Համահավաք դեպարտամենտի տնօրենը (Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալը), ինչպես նաեւ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների 25 պաշտոնատար անձինք՝

- Կոլեգիայի անդամների (նախարարներ) քարտուղարությունների 5 ղեկավար.

- Հանձնաժողովի դեպարտամենտների 4 տնօրեն.

- Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների 14 տեղակալ.

- Կոլեգիայի անդամների (նախարարներ) 2 օգնական:

Միության անդամ պետությունների գործարար համայնքներից Աշխատանքային խմբի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի (գործատուների) միության, Բելառուսի Հանրապետության արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի (վարձակալների) կոնֆեդերացիայի, Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի եւ Ռուսաստանի արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի միության ներկայացուցիչները:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի «Ընդհանուր դրույթներ» վերնագրով I բաժնով սահմանվում են Հիմնադրույթի հիմնական մշակումները, դրա իրավական կարգավորման առարկան, Աշխատանքային խմբի գործունեության իրավական հիմքերը, Աշխատանքային խմբի հիմնական խնդիրները:

Աշխատանքային խմբի հիմնական խնդիրներն են՝

- Համահավաք դեպարտամենտի դիրքորոշման առկայության դեպքում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման անհրաժեշտության մասին հարցերի ուսումնասիրությունը.

- Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների պատրաստումը:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի «Աշխատանքային խմբի ղեկավարությունը, կազմը եւ գործունեության ապահովումը» վերնագրով II բաժնով սահմանվում են Աշխատանքային խմբի ղեկավարի լիազորությունները եւ նրան փոխարինելու կարգը, Աշխատանքային խմբի պատասխանատու քարտուղարի գործառույթները, Աշխատանքային խմբի կազմի ձեւավորման հետ կապված մոտեցումները, դրա նիստերին Աշխատանքային խմբի անդամների

մասնակցության կարգը, Աշխատանքային խմբի գործունեության ապահովմանն առնչվող հարցերը:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթով նախատեսված է, որ Աշխատանքային խմբի անդամները անձամբ են մասնակցում Աշխատանքային խմբի նիստերին:

Աշխատանքային խմբի նիստին՝ դրա անդամի մասնակցելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման այն ղեկավարի (ղեկավարի տեղակալի) հանձնարարությամբ, որի ներկայացուցիչը Աշխատանքային խմբի անդամն է, Աշխատանքային խմբի նիստին կարող է մասնակցել այլ պաշտոնատար անձ կամ այդ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակից:

Աշխատանքային խմբի նիստին՝ դրա անդամի ներկա գտնվելու անհնարինության դեպքում նա իրավասու է, նախքան Աշխատանքային խմբի նիստի օրը, Աշխատանքային խմբի նիստի օրակարգի հարցի (հարցերի) շուրջ գրավոր ներկայացնելու իր դիրքորոշումը, որն արտացոլվում է Աշխատանքային խմբի նիստի արձանագրության մեջ:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի «Աշխատանքային խմբի նիստերին նախապատրաստվելու կարգը» վերնագրով II բաժնով սահմանվում են Աշխատանքային խմբի նիստերն անցկացնելու պարբերականության հարցերը, ինչպես նաեւ Աշխատանքային խմբի օրակարգի եւ նիստերի նյութերի ձեւավորման կարգը:

Աշխատանքային խմբի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության՝ հաշվի առնելով Կանոնակարգի 165-րդ եւ 167-րդ կետերով սահմանված՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների նախապատրաստման ժամկետները (15 օրացուցային օրվա ընթացքում):

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի 16-րդ կետով նաեւ նախատեսված է, որ նիստի անցկացման ժամի եւ տեղի, օրակարգի եւ Աշխատանքային խմբի նիստի վերաբերյալ նյութերի մասին տեղեկատվությունն ուղարկվում է Աշխատանքային խմբի անդամներին՝ Աշխատանքային խմբի պատասխանատու քարտուղարի կողմից ոչ ուշ, քան Աշխատանքային խմբի նիստի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի «Աշխատանքային խմբի նիստերի անցկացման կարգը եւ դրանց արդյունքների ձեւակերպումը» վերնագրով IV բաժնով սահմանվում են Աշխատանքային խմբի նիստերի անցկացման վայրը, Աշխատանքային խմբի նիստերին հրավիրված անձանց մասնակցության կարգը, Աշխատանքային խմբի նիստերի ընթացքում հարցերի քննարկման կարգը, ինչպես նաեւ Աշխատանքային խմբի նիստերի անցկացման արդյունքում ընդունված որոշումների ձեւի եւ բովանդակության վերաբերյալ հարցերը:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթով նախատեսված է, որ Աշխատանքային խմբի նիստերն անցկացվում են Հանձնաժողովի գտնվելու վայրում՝ Մոսկվա քաղաքում, որպես կանոն, Հանձնաժողովի շինություններում:

Հարկ է հատուկ նշել, որ «Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի 26-րդ կետով սահմանվում է այն տեղեկությունների ցանկը, որոնք պարտադիր կարգով պետք է նշվեն կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ:

Աշխատանքային խմբի նիստին Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման վերաբերյալ հարցի ուսումնասիրության արդյունքներով՝ այդ նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության մեջ նշվում է հետեւյալի մասին տեղեկատվություն՝

ա) Հանձնաժողովի որոշման նախագծի մեջ այդ նախագծի դրույթներով նախատեսված կամ նշված դրույթների մասով ծագող՝

ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելորդ պարտավորությունների, սահմանափակումների եւ (կամ) արգելքների,

ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների չհիմնավորված ծախսերի,

Միության տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար խոչընդոտների բացահայտման (չբացահայտման) փաստեր.

բ) այն խնդրի հիմնավորումը, որի լուծմանն է ուղղված Հանձնաժողովի որոշման նախագիծը, կարգավորման նպատակները եւ անձանց խումբը (խմբերը), որոնց շահերի պաշտպանությանն է ուղղված Հանձնաժողովի որոշման նախագիծը.

գ) կարգավորման հասցեատեր, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ եւ դրանց վրա կարգավորման ունեցած ազդեցություն.

դ) կարգավորման հասցեատերերի վրա դրվող պարտավորություններին մասին տեքստի (վարքագծի պարտադիր կանոնների) բովանդակություն.

ե) Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված՝ խնդրի լուծման եւ կարգավորման նպատակին հասնելու մեխանիզմ (առաջարկվող կարգավորման եւ լուծվող խնդրի միջեւ փոխադարձ կապ).

զ) առաջարկվող կարգավորման՝ Մշակող դեպարտամենտի կողմից ուսումնասիրված այլընտրանքներ:

Այն տեղեկությունների նշված ցանկը, որոնց մասին պարտադիր պետք է նշվի Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ, կազմված է Կանոնակարգի 144-րդ եւ 147-րդ կետերով սահմանված նորմերի հիման վրա, որոնցով, համապատասխանաբար, նախատեսված են կարգավորման ազդեցության գնահատման անցկացման նպատակը եւ կարգավորման հիմնական որակական այն հատկանիշները, ըստ որոնց այն անցկացվում է:

Աշխատանքային խմբի բոլոր անդամների՝ իրենց դիրքորոշումն արտահայտելու իրավունքի ապահովման նպատակով՝ «Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի 27-րդ կետով նախատեսված է, որ Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման հարցի վերաբերյալ՝ Աշխատանքային խմբի անդամն Աշխատանքային խմբի նիստին այդ հարցի ուսումնասիրման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իրավասու է Համահավաք դեպարտամենտ ներկայացնելու հատուկ կարծիք, որը պարտադիր կցվում է Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությանը:

Հանձնաժողովի որոշումների՝ 2015 թվականին Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված 75 նախագծերից ոչ մեկի վերաբերյալ Աշխատանքային խմբի անդամների կողմից որեւէ հատուկ կարծիք չի արտահայտվել:

2015 թվականի ապրիլի 1-ից (Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի ներդրման պահից սկսած) դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ 9 ամսվա ընթացքում, անցկացվել է Աշխատանքային խմբի 22 նիստ:

2015 թվականի երկրորդ եռամսյակում անցկացվել է Աշխատանքային խմբի 5 նիստ, նույն թվականի երրորդ եռամսյակում՝ Աշխատանքային խմբի 11 նիստ, իսկ չորրորդ եռամսյակում՝ Աշխատանքային խմբի 6 նիստ:

Աշխատանքային խմբի նիստերի անցկացման դինամիկայի եւ ուսումնասիրված հարցերի թվի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ 2015 թվականի ամիսների (ապրիլ- դեկտեմբեր), ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Ցուցանիշ / 2015 թվականի ամիս	Անցկացված նիստերի թիվը	Նիստերի ընդհանուր թվի մասնաբաժինը	Ուսումնասիրված հարցերի թիվը	Ուսումնասիրված հարցերի ընդհանուր թվի մասնաբաժինը
Ապրիլ	1	4,5%	3	3,75%
Մայիս	1	4,5%	3	3,75%
Հունիս	3	13,5%	11	13,75%
Հուլիս	5	23%	16	20%
Օգոստոս	2	9%	9	11,25%
Սեպտեմբեր	4	18,5%	14	17,5%
Հոկտեմբեր	2	9%	4	5%
Նոյեմբեր	3	13,5%	18	22,5%
Դեկտեմբեր	1	4,5%	2	2,5%
Ընդամենը	22	100%	80	100%

Այսպիսով, Աշխատանքային խմբի նիստերն անցկացվել են միջին պարբերականությամբ՝ 12,5 օրացուցային օրվա ընթացքում մեկ անգամ, այսինքն՝ այնպիսի ժամկետների սահմանում, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության ժամանակին նախապատրաստումն ապահովելու համար (այդ նախապատրաստման ժամկետը 15 օրացուցային օր է կազմում):

Արդյունքում, 2015 թվականին Աշխատանքային խումբը նիստերի անցկացման հաճախականության եւ պարբերականության առումով համարվել է Հանձնաժողովի կոլեգիային կից առավել ակտիվ գործող խորհրդատվական մարմինը:

Աշխատանքային 22 նիստի շրջանակներում ուսումնասիրվել է 80 հարց, որոնցից՝

- 75 հարցը՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման վերաբերյալ.

- 3 հարցը՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման անհրաժեշտության առկայության (բացակայության) վերաբերյալ.

- 2 հարցը՝ կազմակերպչական բնույթի (Աշխատանքային խմբի պատասխանատու քարտուղարի նշանակման եւ Աշխատանքային խմբի նիստերին՝ դրա անդամների մասնակցության մասին):

Այսպիսով, Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստի շրջանակներում միջին թվով ուսումնասիրվել է մոտավորապես 4 (3,64) հարց:

Հարկ է նշել, որ Աշխատանքային խմբի 22 նիստից 14-ն անցկացվել են տնտեսական եւ Կոլեգիայի՝ ֆինանսական քաղաքականության հարցերով անդամի (նախարար)՝ Աշխատանքային խմբի ղեկավարի (64%) նախագահությամբ եւ 8 նիստը՝ Համահավաք դեպարտամենտի տնօրենի՝ Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալի (36%) նախագահությամբ:

«Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթին (19-րդ կետ) համապատասխան՝ Մշակող դեպարտամենտի եւ (կամ) Համահավաք դեպարտամենտի՝ Աշխատանքային խմբի ղեկավարի հետ համաձայնեցված հրավերով Աշխատանքային խմբի նիստերին (այդ թվում՝ տեսաժողովի ռեժիմով) կարող են մասնակցել Միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների ներկայացուցիչները, Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները, անհրաժեշտ որակավորում եւ մասնագիտական հմտություններ ունեցող անկախ փորձագետներ, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչները (այդ թվում՝ տեսաժողովի ռեժիմով):

2015 թվականին, բացի Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված գործարար համայնքի ներկայացուցիչներից, դրա յուրաքանչյուր նիստին մասնակցել է Միության անդամ պետությունների գործարար համայնքի՝ միջինը 2 լրացուցիչ կերպով հրավիրված ներկայացուցիչ, որոնք ճյուղային

ձեռնարկատիրական միավորումների եւ առանձին տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներ են:

Կանոնավոր կերպով ապահովվում է, որ Աշխատանքային խմբի նիստերին անձամբ մասնակցեն դրա այն անդամները, որոնք ներկայացնում են Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության գործարար համայնքը (համապատասխանաբար, Մոսկվա քաղաքում ներկայացուցչություն ունեցող՝ Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատն ու Ռուսաստանի արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի միությունը):

Աշխատանքային խմբի նիստերին Միության անդամ պետությունների գործարար համայնքի առավել ընդգրկուն մասնակցությունն ապահովելու նպատակով՝ ձեռնարկատիրական միավորումներից ստացված առաջարկությունների համաձայն 2015 թվականին Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության գործարար համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ տեսաժողովի ձեւաչափով անցկացվել է Աշխատանքային խմբի երկու նիստ:

Աշխատանքային խմբի նիստերի անցկացման որակը եւ դրանց պատրաստվելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստից առաջ 2015 թվականին Համահավաք դեպարտամենտի եւ Մշակող դեպարտամենտի ներկայացուցիչների հետ փորձագետների մակարդակով անցկացվել են խորհրդատվություններ (խորհրդակցություններ), որոնց շրջանակներում նախապես մշակվել եւ քննարկվել են Աշխատանքային խմբի նիստերի օրակարգում ներառված հարցերը (Հանձնաժողովի որոշման նախագծերը):

Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստի արդյունքների հիման վրա՝ դրա անցկացման արդյունքները ձեւակերպվում են արձանագրություններով:

Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման վերաբերյալ

յուրաքանչյուր հարցի մասով՝ Աշխատանքային խմբի նիստի արձանագրության մեջ ներկայացվում են՝

- Մշակող դեպարտամենտի անունից՝ Հանձնաժողովի որոշման նախագծի մասին զեկուցողի, ինչպես նաեւ Աշխատանքային խմբի անդամների, նրանց ներկայացուցիչների եւ հրավիրված այն անձանց վերաբերյալ տեղեկություններ, որոնք մասնակցել են հարցի քննարկմանը.

- Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն նախապատրաստելու՝ Համահավաք դեպարտամենտին տրված հանձնարարականը (այդ նախապատրաստման համար հստակ ժամկետ սահմանելով).

- Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ այն դիտողությունների եւ առաջարկությունների մասին տեղեկատվությունը, որոնք Աշխատանքային խմբի նիստի ընթացքում տեղի ունեցած քննարկման արդյունքների հիման վրա պետք է Համահավաք դեպարտամենտի կողմից արտացոլվեն կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ (յուրաքանչյուր դիտողության եւ առաջարկության մասով՝ մանրամասնորեն).

- Աշխատանքային խմբի անդամների կողմից Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առաջադրված հարցերին առնչվող տվյալները, ինչպես նաեւ դրանց մասով Մշակող դեպարտամենտի ներկայացուցիչների կողմից տրվող պատասխանները եւ մեկնաբանությունները (առկայության դեպքում).

- կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը Մշակող դեպարտամենտին եւ Աշխատանքային խմբի անդամներին ուղարկումը, ինչպես նաեւ Միության պաշտոնական կայքում դրա տեղադրումն ապահովելու վերաբերյալ՝ Համահավաք դեպարտամենտին տրված հանձնարարականը:

Այսպիսով, 2015 թվականին ապահովվել է Աշխատանքային խմբի գործունեության կազմակերպա-իրավական հիմքերը (ընթացակարգը, կազմը եւ

այլն), ինչպես նաեւ կանոնավոր հիմքով ակտիվ գործունեությունը՝ Մշակող դեպարտամենտի կողմից ստացվող բոլոր հարցերի (Հանձնաժողովի որոշումների նախագծերի) ուսումնասիրությամբ, նիստերին գործարար համայնքի մասնակցության խթանմամբ եւ Աշխատանքային խմբի նիստերի ժամանակ հարցերի ուսումնասիրության արդյունքների ձեւակերպմամբ:

1.2. Կարգավորման ազդեցության գնահատման անցկացման ժամանակ կիրառվող փաստաթղթերի ձեւերը եւ դրանք կազմելու կանոնները

Կանոնակարգի 154-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշման նախագծի կարգավորման ազդեցության՝ նախապատրաստվող ընթացիկ գնահատման (հանրային քննարկման) փուլում Մշակող դեպարտամենտը կազմում է՝

- տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որը միջանկյալ վերլուծական հաշվետվություն է, եւ դրանում նշվում է Մշակող դեպարտամենտի կարծիքը, այդ թվում՝ կարգավորման հիմնական որակական բնութագրերի մասին.

- շահագրգիռ անձանց ուղղված հարցերի ստանդարտացված ցանկ պարունակող հարցաթերթիկ՝ նախատեսված այդ անձանց կողմից՝ Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ փորձագիտական գնահատական ստանալու համար, այդ թվում՝ կարգավորման հիմնական որակական բնութագրերի մասին:

Ընթացիկ գնահատման փուլի անցկացման կարգը ներկայացված է 3-րդ գծապատկերում:

Գծապատկեր 3



Ընդ որում, Կանոնակարգով նախատեսված է, որ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը եւ հարցաթերթիկը կազմվում են Հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոններով սահմանվող ձեւերի համաձայն:

Կանոնակարգի 159-րդ կետի համաձայն՝ շահագրգիռ անձանց տեղեկացնելու նպատակով՝ Մշակող դեպարտամենտը հանրային քննարկման ժամկետի ավարտից 10 օրացուցային օրվանից ոչ ուշ, Հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոններով սահմանվող ձեւերի համաձայն, Միության պաշտոնական կայքում տեղադրում է ամփոփ տեղեկատվություն ներկայացված առաջարկությունների մասին՝ դրանք հաշվի առնելու եւ (կամ) դրանք մերժելու հիմնավորումների մասին տեղեկությունների նշմամբ:

Կանոնակարգի 173-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված է, որ ըստ Հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոնների, պետք է սահմանվեն ոչ միայն կարգավորման ազդեցության գնահատման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի (տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների, հարցաթերթիկի եւ ամփոփ տեղեկատվության) ձեւերը, այլ նաեւ դրանք կազմելու կանոնները:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոնները հաստատված են Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 46 որոշմամբ:

Փաստաթղթաշրջանառության կանոնների թիվ 5 հավելվածով սահմանված են Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման արդյունքների հիման վրա կազմվող փաստաթղթերին եւ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

Փաստաթղթաշրջանառության կանոնների թիվ 5 հավելվածի II բաժնով նախատեսված են Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները:

Փաստաթղթաշրջանառության կանոնների թիվ 5 հավելվածով նաեւ սահմանված են՝

- ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի ձեւը (ձեւ 2).

- կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում անցկացնելու համար նախատեսված հարցաթերթիկի ձեւը (ձեւ 3).

- կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում անցկացնելու ընթացքում ստացված առաջարկությունների մասին ամփոփ տեղեկատվության ձեւը (ձեւ 4):

Ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա՝ Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի ձեւին համապատասխան՝ դրանում առաջին հերթին պետք է նշվեն Կանոնակարգի 147-րդ կետով նախատեսված՝ կարգավորման հիմնական որակական բնութագրերի մասին տեղեկությունները, մասնավորապես՝

- այն խնդիրը, որի լուծմանն է ուղղված Հանձնաժողովի որոշման նախագիծը.

- կարգավորման նպատակը.

- այն անձանց խմբերը, որոնց շահերի պաշտպանությանն է ուղղված Հանձնաժողովի որոշման նախագիծը.

- կարգավորման հասցեատերերը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտները, եւ կարգավորման ունեցած ազդեցությունը դրանց վրա.

- կարգավորման հասցեատերերի համար սահմանվող սահմանափակումների բովանդակությունը (վարքագծի պարտադիր կանոններ).

- խնդրի լուծման եւ կարգավորման նպատակին հասնելու՝ Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված մեխանիզմը (առաջարկվող կարգավորման եւ լուծվող խնդրի միջեւ փոխադարձ կապի նկարագրություն).

- առաջարկվող կարգավորման՝ ուսումնասիրված այլընտրանքների մասին տեղեկությունները:

Բացի կարգավորման հիմնական որակական բնութագրերից՝ Փաստաթղթաշրջանառության կանոններով սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի ձեւով նաեւ նախատեսված է այնպիսի տեղեկությունների նշման անհրաժեշտություն, ինչպիսիք են՝

- Հանձնաժողովի որոշման նախագծի ընդունման նորմատիվ իրավական հիմքերը.

- Հանձնաժողովի իրավասությունների այն ոլորտը, որին առնչվում է Հանձնաժողովի որոշման նախագիծը.

- ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար Հանձնաժողովի որոշման նախագծի ընդունման ֆինանսատնտեսական հետեւանքները.

- Հանձնաժողովի որոշման նախագիծն ուժի մեջ մտնելու համար ենթադրվող ժամկետները.

- կարգավորման ակնկալվող արդյունքը.

- Հանձնաժողովի որոշման նախագծի առարկան հանդիսացող հարաբերությունների կարգավորման հարցում Միության անդամ պետությունների փորձի եւ միջազգային փորձի նկարագրությունը (դրա՝ առաջադեմ եւ կիրառելի լինելու վերաբերյալ հիմնավորմամբ).

- Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում անցկացնելու մասին տեղեկությունները (լրացուցիչ լրացվում են հանրային քննարկումն ավարտվելուց հետո).

- Հանձնաժողովի որոշման նախագծի վրա կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության վերաբերյալ տեղեկությունները (լրացուցիչ լրացվում են Հանձնաժողովի որոշման նախագծի վրա կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունն ստանալուց հետո).

- այլ տեղեկատվություն, որն ըստ Հանձնաժողովի որոշման նախագծի նախապատրաստման համար պատասխանատու դեպարտամենտի, վերաբերում է Հանձնաժողովի որոշման նախագծի եւ (կամ) դրա նախապատրաստման մասին հիմնական տեղեկություններին (լրացվում է Մշակող դեպարտամենտի հայեցողությամբ):

Ընդ որում, Փաստաթղթաշրջանառության կանոնների թիվ 5 հավելվածի II բաժնով նախատեսված են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի յուրաքանչյուր սյունակի լրացման մանրամասն կանոններ:

Հարկ է նշել, որ 2015 թվականի ընթացքում Մշակող դեպարտամենտների կողմից տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների լրացման որակն ընդհանուր առմամբ բարձրացել է, դրանց կազմմանը ներկայացվող՝ Փաստաթղթաշրջանառության կանոններով սահմանված պահանջների պահպանման մակարդակը նույնպես ունեցել է ընդհանուր դրական դինամիկա:

Մշակող դեպարտամենտների կողմից տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների լրացման առավել տիպիկ սխալներից եւ անճշտություններից կարելի է առանձնացնել հետեւյալները՝

Առաջինը՝ որպես խնդիր, որի առկայության հետ կապված նախապատրաստվել է Հանձնաժողովի որոշման նախագիծը, Մշակող դեպարտամենտը ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար արգելքների, ինչպես նաեւ ձեռնարկատիրական գործունեության իրականացման խոչընդոտների առկայության մասին փաստացի տվյալների փոխարեն հաճախ պաշտոնապես նշել է Միության շրջանակներում միասնական (միասնականացված) պահանջների, կանոնների եւ ընթացակարգերի բացակայության մասին, որոնք պետք է սահմանվեն Միության մասին պայմանագրին եւ Միության շրջանակներում կնքվող այլ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Դրա հետ մեկտեղ, Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելիս Աշխատանքային խումբը եւ Համահավաք

դեպարտամենտը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կանոնների՝ Միության իրավունքի շրջանակներում վերազգային կարգավորում եւ միասնականացում նախատեսելու անհրաժեշտությամբ առաջնորդվել են միայն այն չափով եւ այն ծավալով, որը Հանձնաժողովին պատվիրակվել է Միության անդամ պետությունների կողմից եւ պահանջվում է Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժն ապահովելու համար:

Երկրորդը՝ Մշակող դեպարտամենտները, հատկապես, կարգավորման ազդեցության գնահատում ներդնելու սկզբնական փուլի համար որպես կարգավորման նպատակ բավական հաճախ նշել են Հանձնաժողովի որոշմամբ միասնական պահանջների, կանոնների եւ ընթացակարգերի հաստատումը:

Միեւնույն ժամանակ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման ժամանակ Աշխատանքային խումբը եւ Համահավաք դեպարտամենտը Մշակող դեպարտամենտների ուշադրությունը բազմիցս հրավիրել են այն փաստի վրա, որ վերազգային կարգավորման ներդնումը կարգավորման առումով ինքնանպատակ չէ եւ պետք է ունենա ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների կամ պաշտպանվող անձանց այլ կատեգորիաների համար կոնկրետ վերջնական արդյունքի հասնելու նպատակ:

Երրորդ՝ կարգավորման հասցեատերերի ցանկը նշելիս Մշակող դեպարտամենտները հաճախ սահմանափակվել են այդ անձանց խմբերի թվարկմամբ՝ չներկայացնելով այն կարգավորման ազդեցության նկարագրությունը, որը Հանձնաժողովի որոշման նախագծի նորմերը կարող են ունենալ կարգավորման հասցեատերերի վրա:

Չորրորդ՝ Մշակող դեպարտամենտի կողմից բավական հաճախ չի ներկայացվում Հանձնաժողովի որոշման նախագծի ընդունման եւ կարգավորման հայտարարված նպատակին հասնելու միջեւ պատճառահետեւանքային կապի նկարագրությունը, այսինքն՝ չի բացահայտվում այն խնդրի լուծման մեխանիզմը,

որի վերացմանն է ուղղված Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված կարգավորումը:

Հինգերորդ՝ առաջարկվող կարգավորման այլընտրանքները նկարագրելու փոխարեն Մշակող դեպարտամենտը հաճախ սահմանափակվում է այն փաստի հաստատմամբ, որ Միության մասին պայմանագրով կամ Միության շրջանակներում կնքվող այլ միջազգային պայմանագրերով՝ համապատասխան հարցի վերաբերյալ՝ Հանձնաժողովի որոշման նախագծի ընդունման այլընտրանքներ նախատեսված չեն:

Ընդ որում, Աշխատանքային խումբը եւ Համահավաք դեպարտամենտը կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելիս առաջնորդվում են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում առնվազն այնպիսի այլընտրանքային տարբերակ դիտարկելու անհրաժեշտությամբ, ինչպիսին գործող կարգավորման պահպանումն է (ստատուս-քվոյի տարբերակ կամ «զրոյական տարբերակ»)՝ ներկայացնելով ինտեգրացիոն նպատակներին եւ արդյունքներին հասնելու առումով դրա անարդյունավետ լինելու մասին հիմնավորումներ:

Վեցերորդ՝ մշակող դեպարտամենտը շատ հազվադեպ է ներկայացնում Հանձնաժողովի որոշման նախագծի իրավական կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների կարգավորման՝ Միության անդամ պետություններում ներկայումս առկա փորձի նկարագրությունը, ինչը բարդացնում է առաջարկվող կարգավորման՝ ընթացիկ իրավիճակի հետ համեմատությունը եւ վերազգային մակարդակով կարգավորման ներդրման հետ կապված փոփոխությունների գնահատումը:

Մշակող դեպարտամենտի կողմից նաեւ հաճախ չի ներկայացվում առկա միջազգային փորձի նկարագրությունը, նույնիսկ այն դեպքերում, երբ որոշման նախագիծը նախապատրաստվել է միջազգային կազմակերպությունների կամ այլ ինտեգրացիոն միավորումների (նախ եւ առաջ՝ Եվրոպական միության) փաստաթղթերի հիման վրա:

Վերջապես, Մշակող դեպարտամենտները տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի 15-րդ կետում հաճախ բավականաչափ լիարժեք չեն ներկայացնում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության եւ Հանձնաժողովի որոշման նախագծի լրամշակման մասին տեղեկությունները՝ հաշվի առնելով դրանցում շարադրված դիտողություններն ու առաջարկությունները: Մշակող դեպարտամենտները հաճախ պարզապես սահմանափակվում են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի 15-րդ կետում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության առկայության փաստի ուղղակի հաստատմամբ՝ նշելով դրա վավերապայմանները (ստորագրման ամսաթիվը եւ համարները): Դրա հետ մեկտեղ, Կանոնակարգի 169-րդ կետի երկրորդ պարբերությամբ հստակ սահմանված է, որ լրամշակված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում ներկայացվում են տեղեկություններ՝ Հանձնաժողովի որոշման նախագծի լրամշակման ընթացքում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ նշված դիտողությունները հաշվի առնելու եւ (կամ) դրանք մերժելու հիմքերի մասին:

Տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների լրացման որակի բարձրացման նպատակով՝ Մշակող դեպարտամենտի աշխատակիցների համար՝ Համահավաք դեպարտամենտի կողմից 2015 թվականին անցկացվել են մի շարք հատուկ սեմինարներ՝ կարգավորման ազդեցության գնահատման մեթոդաբանության ոլորտում առաջատար փորձագետների ներգրավմամբ (այդ սեմինարները կայացել են 2015 թվականի ապրիլի 16-ին, հուլիսի 17-ին եւ հոկտեմբերի 9-ին):

Ընդ որում, 2015 թվականի ապրիլի 16-ին անցկացված սեմինարի շրջանակներում Համահավաք դեպարտամենտի կողմից՝ Մշակող դեպարտամենտի աշխատակիցներին ներկայացվել են ԿԱԳ-ի անցկացման ժամանակ կիրառվող փաստաթղթերի ձեւերը, ինչպես նաեւ դրանք կազմելու կանոնները, պարզաբանվել են այդ փաստաթղթերի ձեւերի լրացման հետ կապված կազմակերպական եւ մեթոդական հարցերը եւ Միության պաշտոնական կայքում դրանց տեղադրումը:

2015 թվականի հուլիսի 17-ին կայացած սեմինարի ժամանակ, հաշվի առնելով կուտակած փորձը, Համահավաք դեպարտամենտի կողմից՝ Մշակող դեպարտամենտի աշխատակիցներին ներկայացվել են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների ճիշտ եւ ոչ ճիշտ լրացման կոնկրետ օրինակներ, ընդհանրացվել են տիպիկ եւ առավել հաճախ թույլ տրվող սխալները, պարզաբանվել են այդ սխալների վերացման եղանակները:

Արժանահիշատակ է այն փաստը, որ 2015 թվականի ընթացքում դիտարկվել է Մշակող դեպարտամենտների կողմից՝ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների լրացման որակի (ճշգրտության եւ ամբողջականության) բարձրացման դրական միտում:

Կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկում անցկացնելու համար հարցաթերթիկի ձեւով նախատեսվում են հետեւյալ բաժինները՝

- «Լրացված հարցաթերթիկի ուղարկման եղանակի, ԵՏՀ որոշման նախագծի հանրային քննարկման անցկացման ժամկետների եւ ԵՏՀ որոշման նախագծի նախապատրաստման համար պատասխանատու դեպարտամենտի պատասխանատու աշխատակցի մասին տեղեկատվություն» վերնագրով I բաժին (լրացվում է պատասխանատու դեպարտամենտի կողմից).

- «ԵՏՀ որոշման նախագծի հանրային քննարկման՝ հարցաթերթիկը լրացրած մասնակցի մասին տեղեկատվություն» վերնագրով II բաժին (լրացվում է հանրային քննարկման մասնակցի կողմից եւ ներառում է կոնտակտային տվյալները, ինչպես նաեւ նրա գործունեության ոլորտի մասին տեղեկություններ).

- «Հանրային քննարկման մասնակցի կողմից լրացման համար պարտադիր հարցեր» վերնագրով III բաժին.

- «Հանրային քննարկման մասնակցի կողմից լրացման համար նախատեսված լրացուցիչ հարցեր» վերնագրով IV բաժին (լրացվում է հարցաթերթիկը լրացրած անձի մոտ տեղեկատվության առկայության դեպքում եւ նրա ցանկությամբ):

Հարցաթերթիկի այն հարցերի թվում, որոնք պարտադիր են հանրային քննարկման մասնակցի կողմից լրացման համար, նախատեսված են ինչպես կարգավորման հիմնական որակական բնութագրերին, այնպես էլ Հանձնաժողովի որոշման նախագիծն ուժի մեջ մտնելու համար անցումային շրջանի սահմանման անհրաժեշտությանը վերաբերող հարցեր, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ կոնկրետ առաջարկությունների (դիտողությունների) առկայության մասին հարցեր:

Կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկման անցկացման ընթացքում ստացված առաջարկությունների մասին ամփոփ տեղեկատվության ձեւը կազմված է ինչպես Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ, այնպես էլ հանրային քննարկման մասնակիցների կողմից հարցաթերթիկի լրացման ժամանակ պատասխաններ ներկայացնելու համար:

Ամփոփ տեղեկատվության կազմմանը ներկայացվող պահանջներում հատուկ ուշադրություն է դարձվում հանրային քննարկման մասնակցի առաջարկության մերժման դեպքում՝ այդ առաջարկությունը մերժելու հիմնավորումը «Մշակող դեպարտամենտի մեկնաբանությունները» սյունակում ներկայացնելու անհրաժեշտությանը:

Այսպիսով, 2015 թվականին ամբողջությամբ կազմվել եւ նորմատիվորեն սահմանվել է մեթոդական բազա, որն անհրաժեշտ է Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման անցկացման շրջանակներում կիրառվող փաստաթղթերի կազմման համար, իսկ Մշակող դեպարտամենտները հանրային քննարկման անցկացման շրջանակներում ապահովում են Հանձնաժողովի որոշումների նախագծերին կցվող՝ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների, հարցաթերթիկների եւ ամփոփ տեղեկատվության լրացումն ու Միության պաշտոնական կայքում դրանց տեղադրումը:

1.3. Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքի այն ծառայությունների ներդրում, որոնք անհրաժեշտ են կարգավորման ազդեցության գնահատման իրականացումն ապահովելու համար

Հանձնաժողովը, Կանոնակարգի 152-րդ կետին համապատասխան, կարգավորման ազդեցության գնահատում իրականացնելու շրջանակներում ապահովում է՝

1) Միության պաշտոնական կայքում Հանձնաժողովի որոշումների նախագծերի, տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների, հարցաթերթիկների եւ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների տեղադրումը.

2) բոլոր շահագրգիռ անձանց համար Միության պաշտոնական կայքում տեղադրված Հանձնաժողովի որոշումների նախագծերի, տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների, հարցաթերթիկների եւ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների հասանելիությունը,

3) Հանձնաժողովի որոշումների նախագծերի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների վերաբերյալ բոլոր շահագրգիռ անձանց կողմից կատարված դիտողությունների եւ առաջարկությունների ուղարկման, ինչպես նաեւ հարցաթերթիկների լրացման հնարավորությունը՝ Միության պաշտոնական կայքն օգտագործելու միջոցով.

4) շահագրգիռ անձանց կողմից ուղարկված դիտողությունների եւ առաջարկությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տեղադրումը Միության պաշտոնական կայքում.

5) Միության պաշտոնական կայքում դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու եւ (կամ) դրանց մերժման հիմքերի վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացումը:

Հանրային քննարկման մասնակիցների համար բոլոր նշված հնարավորությունները ապահովվում են Միության պաշտոնական կայքի

ծառայությունները ներմուծելու եւ կիրառելու միջոցով «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում (Միության իրավական պորտալում) հետեւյալ հասցեով՝ https://docs.eaeunion.org/ru-ru/Pages/regulation.aspx.

2015 թվականին Համահավաք դեպարտամենտի կողմից Հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտին առաջարկություն ներկայացվեց կատարելագործել Միության պաշտոնական կայքի մի շարք ծառայություններ՝ հանրային քննարկման մասնակիցների համար կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում օգտագործման հարմարություններ ապահովելու նպատակով:

Այսպես, ներդրվեց Հանձնաժողովի որոշումների որոնման հնարավորություն՝ ըստ հետեւյալ լրացուցիչ պարամետրերի՝

- ըստ ընթացակարգի այն հիմնական տեսակի, որն անցնում է Հանձնաժողովի որոշման նախագիծը (Կանոնակարգի VIII բաժնին համապատասխան նախնական հրապարակում (հանրային քննարկում) կամ Կանոնակարգի IX բաժնին համապատասխան կարգավորման ազդեցության գնահատում (հանրային քննարկում անցկացնելու միջոցով)),

- ըստ Հանձնաժողովի որոշման նախագծի անվանման,

- ըստ Հանձնաժողովի իրավասությունների ոլորտների, որոնց շրջանակներում կազմվել է որոշման նախագիծը (Միության մասին պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող՝ Հաձնաժողովի մասին կանոնակարգի 3-րդ կետով սահմանված ոլորտներից բացի որոնման պարամետրերի շարքում ներառվում են լրացուցիչ ոլորտներ, այդ թվում՝ նրանք, որոնք հաստատվել են Միության շրջանակներում առանձին միջազգային պայմանագրերով, ինչպես օրինակ՝ չափումների միասնականության ապահովումը, դեղամիջոցների շրջանառությունը, բժշկական արտադրատեսակների շրջանառությունը, տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակի), ինքնագնաց մեքենաների անձնագրերի ներդրումը),

- ըստ առանձնահատկություններ ունեցող այլ լրացուցիչ ընթացակարգային տեսակների (երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման ոլորտում նախագծերի գծով խորհրդակցություններ, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների ոլորտում նախագծերի հանրային քննարկում, սանիտարական միջոցառումների ոլորտում նախագծերի հանրային քննարկում, Միության տեխնիկական կանոնակարգերի գծով նախագծերի հանրային քննարկում, միջազգային, կանոնակարգային (միջպետական) եւ ազգային (պետական) ստանդարտների ցանկերի հանրային քննարկում),

- ըստ ԵՏՀ պատասխանատու դեպարտամենտի (Մշակող դեպարտամենտի),

- ըստ Հանձնաժողովի որոշման նախագծի մշակման փուլի (մշակվել է, քննարկման փուլում է, քննարկումն ավարտված է, որոշման նախագիծն ընդունվել է, որոշման նախագիծը մերժվել է):

Բացի այդ, հնարավորություն է ընձեռնվում Հանձնաժողովի որոշման այն նախագծերը, որոնց մասով առկա է կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն, ընդգրկել «մեկ հպման» խմբում:

Միության կայքում գրանցված օգտատերերի համար նաեւ հնարավորություն է ընձեռնվում տեղեկություններ ստանալ Հանձնաժողովի վերահրապարակվող որոշումների նախագծերի մասին:

2015 թվականին Միության պաշտոնական կայքում հրապարակվել է Հանձնաժողովի 292 որոշման նախագիծ, որոնցից՝

- 94-ը՝ Հանձնաժողովի որոշման նախագիծ՝ կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում (Միության կայքում հրապարակված՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի ընդհանուր թվի 32,2%-ը),

- 198-ը՝ Հանձնաժողովի որոշման նախագիծ՝ Կանոնակարգի VIII բաժնով նախատեսված՝ նախնական հրապարակման (հանրային քննարկման) ընթացակարգի շրջանակներում (67,8%):

Այսպիսով, նախնական հրապարակման (հանրային քննարկման) ընթացակարգի շրջանակում Հանձնաժողովի որոշումների երկու անգամ ավելի շատ նախագծեր են ընդգրկվել, քան կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում:

Հարկ է նշել, որ կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգերի իրականացման տարբեր փուլերում Հանձնաժողովի որոշման նախագիծը եւ դրա վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը տեղադրվում են Միության պաշտոնական կայքում երեք անգամ՝ տարբեր խմբագրություններով:

Սկզբնապես, Կանոնակարգի 157-րդ կետի պահանջներին համապատասխան, Հանձնաժողովի որոշման նախագիծը, դրա վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը, ինչպես նաեւ հարցաթերթիկը տեղադրվում են Միության պաշտոնական կայքում՝ դրանց վերաբերյալ հանրային քննարկում անցկացնելու նպատակով:

Հանձնաժողովի որոշման նախագիծը եւ դրա վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը ենթակա են հրապարակման Միության պաշտոնական կայքում՝ Համահավաք դեպարտամենտ եւ Աշխատանքային խմբի անդամներին կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն մշակելու համար ուղարկվելուց հետո: Տվյալ պահանջը սահմանված է Կանոնակարգի 163-րդ կետով՝ շահագրգիռ անձանց հանրային քննարկման արդյունքներով Հանձնաժողովի որոշման նախագծի լրամշակման արդյունքների մասին տեղեկացնելու, ինչպես նաեւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի 14-րդ կետում ներառված հանրային քննարկում անցկացնելու մասին տեղեկություններով լրացված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի տեղադրումն ապահովելու նպատակով:

Ի վերջո, հաշվի առնելով Կանոնակարգի 169-րդ կետի պահանջները, կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունն ստանալուց հետո Միության պաշտոնական կայքում տեղադրվում են այդ եզրակացությունը հաշվի առնելու միջոցով լրամշակված՝ Հանձնաժողովի որոշման նախագիծը, ինչպես նաեւ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության

մեջ ներառված դիտողություններն ընդունելու կամ դրանք մերժելու հիմունքների մասին տեղեկություններով լրամշակված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը: Տվյալ պահանջը սահմանվում է կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացման վերջնական արդյունքների առնչությամբ շահագրգիռ անձանց համար հետադարձ կապ ապահովելու նպատակով:

Հանձնաժողովի որոշման նախագիծը եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը Միության պաշտոնական կայքում բազմիցս տեղադրելու նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել, ըստ կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգերի տարբեր փուլերի հետեւողական իրականացման արդյունքների, դրանցում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու հետագծելիության թափանցիկությունը բոլոր շահագրգիռ անձանց համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ 2015 թվականին ապահովվել է կարգավորման ազդեցության գնահատման անցկացման համար անհրաժեշտ տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքի ձեւավորումը Միության պաշտոնական կայքի (Իրավական պորտալի) այն ծառայությունների մշակման եւ ներդրման միջոցով, որոնք ապահովում են տեղեկությունների եւ փաստաթղթերի տեղադրումը Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգերի անցկացման շրջանակներում:

1.4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու առանձնահատկությունները իրավասության առանձին ոլորտներում

1.4.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ (Միության տեխնիկական կանոնակարգերի եւ դրանց կից ստանդարտների ցանկերի նախագծերը)

Կանոնակարգի 151-րդ կետին համապատասխան՝ Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունման, դրանցում փոփոխությունների կատարման կամ

դրանց չեղարկման՝ Միության կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգերը եւ Միության տեխնիկական կանոնակարգերի անցումային դրույթները գործողության մեջ դնելու մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի մասով կարգավորման ազդեցության գնահատումը բաղկացած է Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման եւ չեղարկման՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով սահմանված փուլերից (ընթացակարգերից):

Իր հերթին՝ միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) այն ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) այն ստանդարտների ցանկերի հաստատման մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի նկատմամբ, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը, եւ միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) այն ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) այն ստանդարտների ցանկերի հաստատման մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի նկատմամբ, որոնք պարունակում են ուսումնասիրությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կիրառման եւ կատարման ու տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատման իրականացման համար անհրաժեշտ նմուշառման կանոնները, կարգավորման ազդեցության գնահատումը բաղկացած է միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) այն ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) այն ստանդարտների ցանկերի մշակման եւ ընդունման կարգով սահմանված փուլերից (ընթացակարգերից), որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման ապահովման եւ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատումն իրականացնելու համար:

Այլ կերպ ասած՝ Միության տեխնիկական կանոնակարգերի եւ դրանց կից ստանդարտների ցանկերի կարգավորման ազդեցության գնահատում

անցկացնելու կարգը պետք է սահմանվի ոչ թե Կանոնակարգով, այլ անմիջականորեն այդ փաստաթղթերի մշակման կարգով:

Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մշակման կարգը ներկայումս սահմանված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման եւ չեղարկման կարգի մասին» հիմնադրույթով:

Միության տեխնիկական կանոնակարգերին կից ներկայացվող ստանդարտների ցանկերի նախագծերի մշակման կարգը ներկայումս սահմանվում է Հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 306 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների բավարարում ապահովող եւ համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների ցանկերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտների ցանկերի մշակման եւ հաստատման կարգի մասին» հիմնադրույթում:

Հաշվի առնելով, որ նշված փաստաթղթերը հաստատվել են Հանձնաժողովի կողմից՝ նախքան Միության իրավունքում Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու անհրաժեշտության մասին նորմեր ամրագրելը, ուստի դրանցում բացակայում են այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի եւ դրանց կից ստանդարտների ցանկերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելուն (բացառությամբ հանրային քննարկման):

Այս կապակցությամբ Հանձնաժողովի խորհրդին տրվել էր 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 16 հանձնարարականը, որի կատարման համար Հանձնաժողովի կոլեգիան պետք է մշակեր եւ 2015 թվականի մարտին ԵՏՀ-ի խորհրդի հաստատմանը ներկայացներ Միության տեխնիկական կանոնակարգերի

եւ դրանց կից ստանդարտների ցանկերի մշակման կարգերի նոր խմբագրությունը՝ Կանոնակարգի IX բաժնով նախատեսված հանրային քննարկման ընթացակարգերի եւ կարգավորման ազդեցության գնահատման համաձայնեցման նպատակով:

Միության տեխնիկական կանոնակարգերի եւ դրանց կից ստանդարտների ցանկերի մշակման կարգերն անցան կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգ (2015 թվականի հունիսի 19-ի թիվ 10 եւ թիվ 11 եզրակացություններ):

Ընդ որում, նշված նախագծերի բովանդակության առնչությամբ պետք է նշել հետեւյալը.

Հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտի կողմից պատրաստվել է «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ» Հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծը:

Հանձնաժողովի խորհրդի որոշման նշված նախագծով նախատեսվում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման եւ չեղարկման կարգի (այսուհետ՝ Տեխկանոնակարգերի մասով կարգի նախագիծ) նոր խմբագրության հաստատումը:

Պետք է նշել, որ Տեխկանոնակարգերի մասով կարգի նախագծում կարգավորման ազդեցության գնահատման մասին 2015 թվականի հունիսի 19-ի թիվ 10 եզրակացության մեջ նշված դիտողություններն ընդհանուր առմամբ հստակեցվել են:

Այսպիսով, Տեխկանոնակարգերի մասով կարգի նախագծի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսվում է, որ Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի հանրային քննարկման փուլն իր մեջ ներառում է կարգավորման ազդեցության գնահատումը:

Տեխկանոնակարգերի մասով կարգի նախագծի 13-րդ կետի «բ», «դ», «ժա»-«ժզ» ենթակետերով նախատեսված է Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի բացատրագրում կարգավորման քանակական բոլոր այն բնութագրերը նշելու անհրաժեշտությունը, ըստ որոնց, Կանոնակարգի 147-րդ կետի համաձայն, պետք է իրականացվի կարգավորման ազդեցության գնահատում:

Ընդ որում, Տեխկանոնակարգերի մասով կարգի նախագծի 28-րդ կետում առաջարկվում է սահմանել, որ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստումն իրականացվում է Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի հանրային քննարկում անցկացնելուց հետո եւ ներպետական համաձայնեցում անցկացնելու համար նախքան Միության անդամ պետություններ ուղարկելը: Առաջարկվում է նախատեսել, որ Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի եզրակացության նախապատրաստումը պետք է ապահովվի Համահավաք դեպարտամենտի կողմից՝ Հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտի, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների համապատասխան նախագծի անմիջական մշակող հանդիսացող իրավասու մարմնի մասնակցությամբ (այսինքն՝ առանց Աշխատանքային խմբի նիստում նախագծի քննարկման):

Տեխկանոնակարգի մասով կարգի նախագծի թիվ 4 հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը ներառվում է ներպետական համաձայնեցման համար Միության անդամ պետություններ ուղարկվող փաստաթղթերի փաթեթում:

Հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտի կողմից նաեւ նախապատրաստվել է ԵՏՀ խորհրդի որոշման նախագիծը, որով առաջարկվում է հաստատել միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ցանկերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկերի մշակման եւ հաստատման կարգը, որոնց կամավոր հիմունքներով կիրառման

արդյունքում ապահովվում է Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանումը, եւ միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ցանկերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) այն ցանկերի մշակման եւ հաստատման կարգը, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները, եւ որոնք անհրաժեշտ են Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու իրականացման եւ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատման իրականացման համար (այսուհետ՝ Ստանդարտների ցանկերի մշակման կարգի նախագիծ)։

Կարգավորման ազդեցության գնահատման 2015 թվականի հունիսի 19-ի թիվ 11 եզրակացության մեջ նշված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել ստանդարտների ցանկերի մշակման կարգի նախագծում:

Ստանդարտների ցանկերի մշակման կարգի նախագծի 18-րդ կետի «գ», «ժ» - «ժդ» ենթակետերով նախատեսված է ստանդարտների ցանկերի նախագծերի բացատրագրում կարգավորման բոլոր որակական բնութագրերը նշելու անհրաժեշտությունը, ըստ որոնց Կանոնակարգի 147-րդ կետի համաձայն, պետք է իրականացվի կարգավորման ազդեցության գնահատումը:

Բացի այդ, հաշվի առնելով Համահավաք դեպարտամենտի եւ Աշխատանքային խմբի՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված առաջարկությունները, ստանդարտների ցանկերի մշակման կարգի նախագծի 27-րդ կետում ստանդարտների ցանկերի նախագծերի հանրային քննարկում անցկացնելու նվազագույն ժամկետը, գործող կարգի համեմատությամբ, ավելացվել է երկու անգամ՝ 30-ից մինչեւ 60 օրացուցային օր:

Հարկ է նաեւ նշել, որ ստանդարտների ցանկերի մշակման կարգի նախագծով ստանդարտների ցանկերի մասով նախատեսված չէ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների պատրաստում, սակայն կարգավորման

ազդեցության գնահատման մասին եզրակացություններում Աշխատանքային խումբը եւ Համահավաք դեպարտամենտը չէին նշել նման եզրակացությունների պատրաստման անհրաժեշտության մասին:

Դրա հետ մեկտեղ, 2015 թվականին Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման կարգի եւ Միության տեխնիկական կանոնակարգերի ստանդարտների ցանկերի մշակման կարգի մասին ԵՏՀ-ի խորհրդի որոշումների նախագծերը չեն ներկայացվել ոչ միայն ԵՏՀ խորհրդի հաստատմանը, այլ նաեւ ԵՏՀ կոլեգիայի նախնական հավանությանը, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ 2015 թվականին չեն կատարվել Կանոնակարգի 151-րդ կետի պահանջները եւ Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի ու դրանց կից ստանդարտների ցանկերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու կարգը սահմանելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի խորհրդի հանձնարարականը:

1.4.2. Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտը

Կանոնակարգի 149-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված է, որ Հանձնաժողովի որոշումների նախագծերի առնչությամբ սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվում է վերջնական գնահատման փուլի շրջանակներում բոլոր միջոցառումների իրականացման միջոցով, ինչպես նաեւ ընթացիկ գնահատման փուլի շրջանակներում՝ միայն տեղեկատվական-վերլուծական տեղեկանք կազմելու մասով միջոցառումներն իրականացնելու միջոցով :

Կանոնակարգի 150-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան՝ սանիտարական միջոցառումների կիրառման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման նպատակներով հրապարակումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական

սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջների եւ ընթացակարգերի մշակման, հաստատման, փոփոխման եւ կիրառման կարգի համաձայն: Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման ժամկետը չի կարող կազմել 60 օրացուցային օրվանից պակաս՝ Միության պաշտոնական կայքում որոշման նախագծի հրապարակման օրվանից հաշված: Հանձնաժողովի նշված որոշումների նախագծերի հանրային քննարկման արդյունքում ստացված մեկնաբանությունների եւ առաջարկությունների ամփոփագիրը (նշելով Մշակող դեպարտամենտի դիրքորոշումը՝ ստացված մեկնաբանությունների եւ առաջարկությունների մասով) տեղադրվում է Միության պաշտոնական կայքում հանրային քննարկման համար սահմանված ժամկետի ավարտման օրվանից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո:

Ընդ որում, Հանձնաժողովի որոշումների նախագծերի առնչությամբ սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտում հանրային քննարկում ներկայումս իրականացվում է «Սանիտարական, կարանտինային բուսասանիտարական եւ անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտերի ընդունման գործընթացում թափանցիկության ապահովման մասին» Հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի մարտի 5-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

Նշված որոշմամբ հաստատվել է, որ.

- Հանձնաժողովի՝ սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտին առնչվող որոշումների եւ առաջարկությունների նախագծերը (ակտերի նախագծերը) տեղադրվում են «Ինտերնետ» ցանցում՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքում,

- դիտողությունների (առաջարկությունների) ներկայացման համար սահմանվում է «Ինտերնետ» ցանցում՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքում ակտի նախագծի հրապարակման օրվանից հետո 60 օրացուցային օրվանից ոչ պակաս տեւողությամբ ժամկետ,

- Հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական եւ անասնաբուժասանիտարական միջոցառումների դեպարտամենտը դիտողությունները (առաջարկությունները) ներկայացնելու ժամկետի ավարտից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է դիտողությունների (առաջարկությունների) համահավաք ցանկ:

Միեւնույն ժամանակ սանիտարական միջոցառումների կիրառման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկում անցկացնելու հարցերը կարգավորելու նպատակով Հանձնաժողովի սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական դեպարտամենտի կողմից կազմվել է Հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծ, որով նախատեսվում է հաստատել Սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ միասնական պահանջներ ու ընթացակարգեր մշակելու, հաստատելու, փոփոխելու եւ կիրառելու կարգը (այսուհետ՝ Սանիտարական միջոցառումների մշակման կարգի նախագիծ):

Սանիտարական միջոցառումների մշակման կարգի նախագիծը անցել է կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգ (2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 32 եզրակացություն):

Սանիտարական միջոցառումների մշակման կարգի նախագծի 10-րդ կետին համապատասխան՝ սանիտարական միջոցառումների կիրառման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հրապարակումը Միության պաշտոնական կայքում իրականացվում է ձեռնարկատիրական գործունեություն ներդնելու պայմանների վրա որոշման նախագծի ազդեցությունների հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի հետ միասին, իսկ առաջարկություններ (դիտողություններ) ներդնելու համար Միության

պաշտոնական կայքում նախագծի հրապարակման օրվանից հետո 60 օրացուցային օրվանից ոչ պակաս տեւողությամբ ժամկետ է սահմանվում:

Իր հերթին Սանիտարական միջոցառումների մշակման կարգի նախագծի 12-րդ կետով նախատեսվում է, որ Հանձնաժողովի որոշման նախագծի հրապարակային քննարկման ժամկետի ավարտից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը ապահովում է.

ա) հրապարակային քննարկման ընթացքում բոլոր առաջարկությունների (դիտողությունների) քննարկումը, դրանց ներառումը դիտողությունների եւ առաջարկությունների ամփոփագրում, ինչպես նաեւ անհրաժեշտ խորհրդակցությունների անցկացումը,

բ) դիտողությունների եւ առաջարկությունների ամփոփագրի կազմումը,

գ) անհրաժեշտության դեպքում՝ Միության անդամ պետությունների իրավասու մարմինների ներգրավմամբ Հանձնաժողովի որոշման նախագծի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի լրամշակումը,

դ) Հանձնաժողովի որոշման նախագծի, տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի եւ դիտողությունների ու առաջարկությունների ամփոփագրի տեղադրումը Միության պաշտոնական կայքում:

Կարգավորման ազդեցության գնահատման եզրակացության մեջ նշված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել սանիտարական միջոցառումների մշակման կարգում:

Սանիտարական միջոցառումների մշակման կարգի նախագիծը Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի 47-րդ նիստում ներկայացվել է քննարկման, բայց քանի որ Միության անդամ պետությունների կողմից առկա էին դիտողություններ եւ առաջարկություններ՝ քննարկումից հանվել եւ ուղարկվել է լրամշակման:

Այսպիսով, 2015 թվականին սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական ոլորտում Հանձնաժողովի որոշումների

նախագծերի հանրային քննարկման անցկացումն ապահովվել է ԵՏՀ-ի կոլեգիայի կողմից սահմանված հատուկ կարգով՝ հաշվի առնելով Կանոնակարգի 150-րդ կետի առաջին պարբերության պահանջները:

1.4.3. Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային միջոցների կիրառման ոլորտը

Կանոնակարգի 149-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման կամ վերացման մասին Հանձնաժողովի այն որոշումների նախագծերի առնչությամբ, որոնց համաձայն, հաշվի առնելով «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության (Միության մասին պայմանագրի թիվ 7 հավելված) 6-8-րդ կետերով սահմանված նորմերը, Հանձնաժողովի կողմից խորհրդակցություններ են անցկացվել անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության այն մասնակիցների հետ, որոնց տնտեսական շահերը կարող են շոշափվել նման որոշումների ընդունմամբ, ինչպես նաեւ այդ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին որոշումների նախագծերի առնչությամբ, կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվում է վերջնական գնահատման փուլի բոլոր միջոցառումների իրականացման միջոցով, ինչպես նաեւ ընթացիկ գնահատման փուլի միջոցառումների իրականացման միջոցով՝ միայն տեղեկատվական-վերլուծական տեղեկանք կազմելու առումով:

Կանոնակարգի 142-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանվել է, որ կարգավորման ազդեցության գնահատում չի անցկացվում երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման կամ վերացման մասին Հանձնաժողովի այն որոշումների նախագծերի առնչությամբ, ըստ որոնց «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրության (Միության մասին պայմանագրի թիվ 7 հավելված) 8-րդ կետին

համապատասխան, խորհրդակցություններ չեն անցկացվում անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության այն մասնակիցների հետ, որոնց տնտեսական շահերի վրա կարող է անդրադառնալ նման որոշումների ընդունումը:

Կանոնակարգի 150-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան երրորդ երկրների ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման կամ վերացման մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի հարցերով խորհրդակցություններ անցկացվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգին համապատասխան՝ անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության այն մասնակիցների հետ, որոնց տնտեսական շահերի վրա կարող են անդրադառնալ նման որոշումների ընդունումը:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության մասնակիցներին «Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման կամ վերացման մասին» որոշման նախագծի նախապատրաստման եւ խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ տեղեկացնելու կարգը (այսուհետ՝ Կարգ) հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 35 որոշմամբ:

Կարգի 2-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովն ապահովում է շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը՝ Միության պաշտոնական կայքում որոշման նախագծի նախապատրաստման մասին ծանուցում տեղադրելու միջոցով: Ընդ որում, նշված ծանուցման հետ միասին, Միության պաշտոնական կայքում տեղադրվում է նաեւ Հանձնաժողովի որոշման նախագծի՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանների վրա թողած ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը:

Կարգի 5-րդ կետով նախատեսված է, որ դիտողություններ ներկայացնելու դեպքում շահագրգիռ անձինք պետք է նշեն որոշակի տվյալներ, այդ թվում՝ պետք է տեղեկություններ հաղորդեն իրենց այն տնտեսական շահերի մասին, որոնց վրա

կարող է անդրադառնալ Հանձնաժողովի որոշման ընդունումը: Ընդ որում, Կարգի 6-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանվում է, որ եթե նման տեղեկություններ չներկայացվեն, ապա տրամադրված դիտողությունները հաշվի չեն առնվի:

Հետագայում շահագրգիռ անձանց կողմից դիտողությունները ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օր հետո, պատասխանատու դեպարտամենտը Կարգի հավելվածում ներկայացված ձեւի համաձայն, կազմում է դիտողությունների ամփոփագիր:

«Ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման ու վերացման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին առեւտրային գործունեության մասնակիցների դիտողությունների ամփոփագրի ձեւին կից ծանոթագրությամբ նախատեսվում է, որ այն դեպքում, երբ դիտողությունը չի ընդունվում, ապա հիմնավորվում է դրա մերժումը:

Խորհրդակցությունները կարող են անցկացվել առերես կամ տեսաժողովի ձեւաչափով:

Կարգի 14-րդ կետին համապատասխան՝ շահագրգիռ անձանց տեղեկացումը Միության պաշտոնական կայքում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշման նախագիծ տեղադրելու միջոցով իրականացվում է պատասխանատու դեպարտամենտի կողմից եւ այն դեպքերում, երբ Հանձնաժողովի կողմից նախկինում ընդունված որոշման մեջ նախատեսվում է կատարել իրավատեխնիկական եւ (կամ) խմբագրական բնույթի փոփոխություններ, որոնք ձեռնարկատիրական գործունեության պայմանների վրա ազդեցություն չեն թողնում:

Միության պայմանագրի թիվ 7 հավելված հանդիսացող՝ «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին»

արձանագրության 8-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել խորհրդատվություն չանցկացնելու մասին՝ հետեւյալ պայմաններից որեւէ մեկի առկայության դեպքում՝

1) արտաքին առեւտրային գործունեություն իրականացնելու իրավունքի վրա անդրադարձող Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված միջոցները չպետք է հայտնի լինեն՝ մինչեւ որոշումն ուժի մեջ մտնելու պահը, որի կապակցությամբ խորհրդակցությունների անցկացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել այդպիսի որոշմամբ նախատեսված նպատակների չիրագործմանը.

2) խորհրդակցությունների անցկացումը կարող է ձգձգել արտաքին առեւտրային գործունեություն իրականացնելու իրավունքի վրա անդրադարձող որոշման ընդունումը, ինչը կարող է էական վնաս հասցնել Միության անդամ պետությունների շահերին.

3) արտաքին առեւտրային գործունեություն իրականացնելու իրավունքի վրա անրդրադարձող՝ Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսվում է բացառիկ իրավունքի տրամադրումը:

Կարգի 12-րդ կետով նախատեսվում է նույնանման նորմ, որի համաձայն, Հանձնաժողովը կարող է խորհրդակցությունները չանցկացնել հետեւյալ ցանկացած պայմանի առկայության դեպքում՝

1) որոշման նախագծով նախատեսված միջոցները չպետք է հայտնի լինեն մինչեւ որոշումն ուժի մեջ մտնելու օրը, որի կապակցությամբ խորհրդակցությունների անցկացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել այդպիսի որոշմամբ նախատեսված նպատակների չիրագործմանը.

բ) խորհրդակցությունների անցկացումը կհանգեցնի Հանձնաժողովի որոշման ընդունման հետաձգմանը, ինչը կարող է զգալի վնաս հասցնել Միության անդամ պետությունների շահերին.

գ) որոշման նախագծով նախատեսվում է բացառիկ իրավունքի շնորհում:

Առաջին երկու պայմանների առկայությունը սահմանվում է Միության անդամ պետությունների կողմից, այդ թվում՝ Հանձնաժողովի

կոլեգիային կից առեւտրի հարցերով խորհրդատվական կոմիտեի մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման եւ պաշտպանական միջոցների հարցերով ենթակոմիտեի շրջանակներում, իսկ երրորդ պայմանի առկայությունը սահմանվում է ինքնուրույն՝ Հանձնաժողովի պատասխանատու դեպարտամենտի կողմից (Մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման դեպարտամենտի կողմից): Նման պայմանների առկայության մասին տեղեկությունները նշվում են Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի փաստաթղթերի փաթեթի եւ նյութերի կազմում ներկայացված տեղեկանքում:

Խորհրդակցություններ չանցկացնելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում շահագրգիռ անձինք, Կարգին համապատասխան, նույնպես չեն տեղեկացվում որոշման նախագծի նախապատրաստման մասին:

Այսպիսով, 2015 թվականին ԵՏՀ մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման դեպարտամենտի կողմից ապահովվել է ԵՏՀ կոլեգիայի որոշման ընդունումը, որով սահմանվում է երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի առնչությամբ կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլ անցկացնելու հատուկ կարգ:

Գլուխ 2. 2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու պրակտիկայի մասին վիճակագրական եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկություններ

2.1. ԵՏՀ որոշումների նախագծերի մասին տեղեկությունների վերլուծություն, որոնց հիման վրա իրականացվել է կարգավորման ազդեցության գնահատումը

2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստմամբ եզրափակվեց Հանձնաժողովի 75 որոշումների նախագծերի գծով կարգավորման ազդեցության գնահատման

ընթացակարգի իրականացումը:

ԵՏՀ որոշումների նախագծերի բաշխման մասին տեղեկությունները, որոնց հիման վրա 2015 թվականին կազմվել են ԿԱԳ-ի մասին եզրակացությունները, ներկայացված են 2-րդ աղյուսակում՝ ըստ Հանձնաժողովի իրավասությունների ոլորտների:

Աղյուսակ 2

Հանձնաժողովի իրավասության ոլորտը	**Հանձնաժողովի որոշումների նախագծերի թիվը, որոնց մասով 2015 թվականին ներկայացվել են ԿԱԳ-ի մասին եզրակացություններ**	**Հանձնաժողովի որոշումների նախագծերի բաժինը՝ ըստ իրավասությունների ոլորտների**
Դեղամիջոցների շրջանառության կարգավորումը	19	26%
Բժշկական արտադրատեսակների շրջանառության կարգավորումը	12	16%
Մաքսային կարգավորում	11	15%
Սանիտարական միջոցառումների իրականացում	7	9%
Չափումների միասնականության ապահովում	7	9%
Տեխնիկական կանոնակարգում	6	8%
Անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացում	6	8%
Տրանսպորտային միջոցների եւ ինքնագնաց մեքենաների շրջանառության կարգավորումը	3	4%
Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացում	2	3%
Ոչ սակագնային կարգավորում երրորդ երկրների նկատմամբ	1	1%
Ծառայությունների առեւտուր, հիմնադրումն ու գործունեությունը	1	1%
Ընդամենը	75	100%

Կարգավորման ազդեցության գնահատման մասին 2015 թվականին նախապատրաստված եզրակացության բաժնի մասին տեղեկությունները՝ ըստ Հանձնաժողովի իրավասության ոլորտների (խոշորացված եղանակով) ներկայացված են 1-ին դիագրամում:

Դիագրամ 1



Հանձնաժողովի որոշումների նախագծեր նախապատրաստող Մշակող դեպարտամենտները, որոնց մասով 2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման մասին ներկայացվել են եզրակացություններ, հետեւյալն են՝

- Տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտը՝ 63% (47 ծրագիր),

- Սանիտարական, բուսասանիտարական եւ անասնաբուժական միջոցառումների դեպարտամենտ՝ 20% (15 ծրագիր),

- Մաքսային օրենսդրության եւ իրավակիրառ գործելակերպի դեպարտամենտ՝ 12% (9 ծրագիր)

- Մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման դեպարտամենտ՝ 3% (2 ծրագիր)

- Մաքսային ենթակառուցվածքի դեպարտամենտ՝ 1% (1 ծրագիր)

- Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտ՝ 1% (1 ծրագիր)

Իրենց հերթին՝ ըստ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների (նախարարների), Հանձնաժողովի որոշումների նախագծերը, որոնց մասով 2015 թվականին կազմվել են կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններ, բաշխվել են հետեւյալ կերպ՝

ԵՏՀ-ի տեխնիկական կանոնակարգման հարցերով կոլեգիայի անդամ (նախարար)՝ 83%,

Մաքսային համագործակցության հարցերով կոլեգիայի անդամ (նախարար)՝ 13% (10 ծրագիր),

- Առեւտրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար)՝ 3% (2 ծրագիր),

- Էկոնոմիկայի եւ ֆինանսական քաղաքականության հարցերով կոլեգիայի անդամ (նախարար)՝ 1% (1 ծրագիր):

Ըստ վերջնական որոշման ընդունման աստիճանի՝ Հանձնաժողովի որոշման այն նախագծերը, որոնց մասով կազմվել են կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ, 2015 թվականին բաշխվել են հետեւյալ կերպ՝

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման 1 նախագիծ,

- Հանձնաժողովի խորհրդի որոշման 37 նախագիծ,

- Հանձնաժողովի կոլեգիայի որոշման 37 նախագիծ:

Կանոնակարգի 166-րդ կետին համապատասխան՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը ստորագրվում է Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից, իսկ ժամանակավոր անաշխատունակության, արձակուրդի կամ գործուղման հետ կապված իր բացակայության ժամանակամիջոցում՝ աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալի կողմից:

2015 թվականին էկոնոմիկայի եւ ֆինանսական քաղաքականության հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի)՝ Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից ստորագրվել է կարգավորման ազդեցության գնահատման 57 եզրակացություն (որը կազմում է ընդհանուր եզրակացությունների 76%-ը):

Իր հերթին, կարգավորման ազդեցության գնահատման մասին 18 եզրակացություն (24%) ստորագրվել է Համահավաք դեպարտամենտի տնօրենի՝ Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալի կողմից, երբ Աշխատանքային խմբի ղեկավարը արձակուրդում կամ գործուղումների մեջ է գտնվել:

Ելնելով Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում կատարված եզրակացությունների բնույթից՝ կարելի է առանձնացնել նման եզրակացությունների հետեւյալ կատեգորիաները՝

- «դրական»՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն, որում եզրահանգում է տրվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի դրական ազդեցության մասին եւ որում չկան Հանձնաժողովի որոշման նախագծի՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելցուկային պարտավորություններ, արգելքներ եւ (կամ) սահմանափակումներ սահմանելու կանխարգելմանն ուղղված դրույթների վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ.

- «պայմանական դրական»՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն, որում եզրահանգում է կատարվել ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի գործած դրական ազդեցության վերաբերյալ՝ Հանձնաժողովի որոշման նախագծի առանձին դրույթների լրամշակման (ճշգրտման) պայմանով՝ նպատակ ունենալով վերացնելու ոչ միանշանակ մեկնաբանումներն ու տարբերություններն իրավակիրառ պրակտիկայում, որոնք կարող են հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելցուկային պարտավորություններ, արգելքներ եւ (կամ) սահմանափակումներ սահմանելուն.

- «բացասական»՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն, որում եզրահանգում է կատարվել ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի գործած բացասական ազդեցության մասին այն պատճառով, որ նման նախագծով ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների նկատմամբ սահմանվում են ավելցուկային պարտավորություններ, արգելքներ եւ (կամ) սահմանափակումներ, որոնք հնարավոր չէ վերացնել դրա առանձին դրույթների լրամշակման (ճշգրտման) միջոցով:

Կատարված եզրահանգումների բնույթով Հանձնաժողովի որոշման նախագծերի վրա կարգավորման ազդեցության գնահատման մասին 2015 թվականին կազմված եզրակացությունները բաշխվել են հետեւյալ կերպ՝

- դրական՝ 8 եզրակացություն (10,7%),
- պայմանական դրական՝ 64 եզրակացություն (85,3%),
- բացասական՝ 3 եզրակացություն (4%):

Աշխատանքային խմբի կողմից կարգավորման ազդեցության գնահատման մասին դրական եզրակացություններն ամենից հաճախ տրվել են մաքսային կարգավորման, ինչպես նաեւ սանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտներում կիրառվող՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի մասով:

Աշխատանքային խմբի կողմից կարգավորման ազդեցության գնահատման մասին բացասական եզրակացություններ կազմվել են տեխնիկական կանոնակարգման, մաքսային վարչարարության եւ դեղամիջոցների շրջանառության ոլորտներում կիրառվող Հանձնաժողովի որոշումների նախագծերի մասով:

Այսպիսով, 2015 թվականի ընթացքում կազմված կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների ճնշող մեծամասնությամբ նախատեսվում է, որ Հանձնաժողովի որոշումների նախագծերը կարող են դրական ազդեցություն ունենալ ձեռնարկատիրական գործունեության իրականացման

պայմանների վրա՝ պայմանով, որ դրանց առանձին դրույթներ լրամշակվեն՝ հաշվի առնելով Աշխատանքային խմբի դիտողություններն ու առաջարկությունները:

2.2. Մշակող դեպարտամենտների կողմից կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլի իրականացման պրակտիկայի մասին տեղեկությունների վերլուծություն

Հանձնաժողովի 94 որոշումների նախագծերի մասով, որոնց հանրային քննարկումը կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում իրականացվել է 2015 թվականին, հանրային քննարկման մասնակիցների կողմից կատարվել է 2586 դիտողություն եւ առաջարկ, որը Հանձնաժողովի որոշման մեկ նախագծի հաշվով միջինում կազմում է 27,5 դիտողություն եւ առաջարկ:

Կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման ընթացքում ընդհանուր թվով դիտողություններ եւ առաջարկություններ են ուղարկել հանրային քննարկման 317 մասնակից՝ ներառյալ բիզնես ասոցիացիաների, տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներ, փորձագետներ (ֆիզիկական անձինք), գիտական ընկերակցությունների ներկայացուցիչներ, Միության անդամ պետությունների գործադիր իշխանության լիազորված մարմիններ:

Կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման ընթացքում ստացված թվով 2586 դիտողություններից եւ առաջարկներից Մշակող դեպարտամենտի կողմից հաշվի են առնվել 1730 դիտողություններ եւ առաջարկներ:

Այսպիսով, 2015 թվականի Մշակող դեպարտամենտների կողմից հաշվի առնված հանրային քննարկման մասնակիցների դիտողությունների եւ առաջարկների բաժինը բավականին բարձր է եղել եւ կազմել է 66,9%:

Ապահովելու համար, որպեսզի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները պատշաճ ժամանակին կազմվեն, Հանձնաժողովի՝

հանրային քննարկման փուլում գտնվող որոշումների նախագծերի առնչությամբ ներկայացվող դիտողությունները եւ առաջարկները մշակող դեպարտամենտներ են ուղարկվել նաեւ Համահավաք դեպարտամենտի կողմից: Համահավաք դեպարտամենտի կողմից 2015 թվականին Մշակող դեպարտամենտներ են ուղարկվել հանրային քննարկման փուլում գտնվող ընդհանուր թվով 92 դիտողություն եւ առաջարկ՝ Հանձնաժողովի որոշումների 16 նախագծերի մասով:

2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի շրջանակներում հանրային քննարկում անցած (այդ թվում՝ հատուկ կարգով) ըստ Հանձնաժողովի իրավասությունների ոլորտների ԵՏՀ որոշումների նախագծերի բաշխումը ներկայացված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Հանձնաժողովի իրավասության ոլորտը	**Հանձնաժողովի որոշումների նախագծերի թիվը, որոնց մասով 2015 թվականին ԿԱԳ-ի շրջանակներում անցկացվել է հանրային քննարկում**	**Հանձնաժողովի որոշումների նախագծերի բաժինը՝ ըստ իրավասությունների ոլորտների**
Դեղամիջոցների շրջանառության կարգավորումը	19	20%
Անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացում	16	17%
Բժշկական արտադրատեսակների շրջանառության կարգավորումը	13	14%
Մաքսայինի կարգավորում	13	14%
Տեխնիկական կանոնակարգում	8	8,5%
Սանիտարական միջոցառումների իրականացում	7	7,5%
Չափումների միասնականության ապահովում	7	7,5%
Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառում	5	5,5%
Տրանսպորտային միջոցների եւ ինքնագնաց մեքենաների շրջանառության կարգավորումը	3	3%

Ոչ սակագնային կարգավորում երրորդ երկրների նկատմամբ	2	2%
Ծառայությունների առեւտուրը, հիմնադրումն ու գործունեությունը	1	1%
Ընդամենը	94	100%

Հանձնաժողովի այն որոշումների նախագծերի բաժնի մասին տեղեկատվությունը, որոնց հանրային քննարկումն անցկացվել է 2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ ըստ Հանձնաժողովի իրավասությունների ոլորտի, (այդ թվում՝ հատուկ կարգով), ներկայացված է (խոշորացված) 2-րդ դիագրամում:

Դիագրամ 2



Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման (հանրային քննարկման) փուլի կազմակերպման եւ անցկացման ժամանակ Մշակող դեպարտամենտների կողմից մեծ մասամբ պահպանվել են կանոնակարգի IX բաժնի 2-րդ ենթաբաժնով նախատեսված բոլոր անհրաժեշտ ընթացակարգերը:

Միեւնույն ժամանակ որոշ դեպքերում ընթացիկ գնահատման փուլի անցկացման ընթացակարգերը Մշակող դեպարտամենտների կողմից ամբողջ ծավալով չեն պահպանվել, ինչին ուշադրություն է դարձվել կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում:

Ընդ որում, Հանձնաժողովի 75 որոշումների նախագծերից, որոնց մասով Աշխատանքային խմբի կողմից 2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններ են նախապատրաստվել, Մշակող դեպարտամենտների կողմից՝ Կանոնակարգով սահմանված ընթացիկ գնահատման փուլի անցկացման ընթացակարգերը չպահպանելու դեպքերը բացահայտվել են 9 նախագծերի նախապատրաստման ժամանակ (12%):

Այսպիսով, 2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում արձանագրվել են Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկում անցկացնելու ընթացակարգերի՝ Մշակող դեպարտամենտների կողմից խախտման հետեւյալ դեպքերը՝

- կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն նախապատրաստելու համար՝ Հանձնաժողովի որոշման նախագիծը ներկայացված է այնպիսի խմբագրությամբ, որում ներառված չեն պրոֆիլային աշխատանքային խմբի նիստերի ընթացքում համապատասխան նախագծի քննարկման շրջանակներում կատարված փոփոխությունները (երկու դեպք).

- չի կատարվել Կանոնակարգի 163-րդ կետի պահանջը՝ Միության պաշտոնական կայքում Հանձնաժողովի այն որոշման նախագծի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի տեղադրման անհրաժեշտության մասով, որոնք լրամշակվել են հանրային քննարկման արդյունքների հիման վրա, եւ այնպիսի խմբագրությամբ, որով դրանք ուղարկվել են կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն նախապատրաստելու համար (մեկ դեպք).

- չի կատարվել տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի լրամշակման եւ Միության պաշտոնական կայքում Հանձնաժողովի որոշման նախագծի

հանրային քննարկում անցկացնելու մասին տեղեկատվությամբ լրացված՝ դրա կրկնակի տեղադրման պահանջը (երեք դեպք).

- Միության պաշտոնական կայքում հանրային քննարկման արդյունքների հիման վրա լրամշակված՝ Հանձնաժողովի որոշման նախագծի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի տեղադրման դեպքում Միության պաշտոնական կայքից հանվել են Հանձնաժողովի որոշման նախագծի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի խմբագրությունների այն ֆայլերը, որոնք ի սկզբանե տեղադրվել են դրանց հանրային քննարկում անցկացնելու համար (մեկ դեպք).

- հանրային քննարկման շրջանակներում Հանձնաժողովի որոշման նախագիծը տեղադրվել է դիտողություններ եւ առաջարկություններ ուղարկելու համար՝ այնպիսի ժամկետի ընթացքում, որի տեւողությունն ավելի քիչ է (20 օրացուցային օր), քան Կանոնակարգի 157-րդ կետով սահմանված՝ հանրային քննարկում անցկացնելու նվազագույն ժամկետը (30 օրացուցային օր, մեկ դեպք).

- խախտվել է կանոնակարգի 159-րդ կետի պահանջը՝ կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկման անցկացման ընթացքում ստացված առաջարկությունների մասին, ինչպես նաեւ դիտողությունների եւ առաջարկությունների մերժման հիմնավորումների մասին ամփոփ տեղեկատվության մեջ ներկայացնելու անհրաժեշտության մասով (մեկ դեպք):

Նշված դեպքերը առավելապես տեղի են ունեցել 2015 թվականի ապրիլ - հունիս ամիսներին, այսինքն՝ Հանձնաժողովի աշխատանքի պրակտիկայում կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգը ներդնելուց հետո առաջին երեք ամիսների ընթացքում եւ պայմանավորված են եղել Հանձնաժողովի որոշումների նախագծերի նախապատրաստման կարգի մասով՝ Կանոնակարգի նոր պահանջների կիրառմանը՝ Մշակող դեպարտամենտների հարմարեցմամբ՝ Միության պաշտոնական կայքում դրանք տեղադրելու միջոցով հանրային քննարկումն անցկացնելով:

Այդ եղանակով, 2015 թվականին կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկումն անցկացնելիս Մշակող դեպարտամենտները, ընդհանուր առմամբ, ապահովել են սահմանված ընթացակարգերի պահպանումը, իսկ Միության անդամ պետությունների գործարար համայնքը հանրային քննարկմանը ակտիվ մասնակցության բարձր մակարդակ է ցուցաբերել, ինչը վկայում է կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգում զգալի հետաքրքրվածության եւ ձեռնարկատիրական ու փորձագիտական համայնքի ներկայացուցիչների շրջանում դրա պահանջվածության մասին:

Պետք է նաեւ ուշադրություն դարձնել Մշակող դեպարտամենտների «կարգավորիչ ճկունության» բավարար մակարդակին, ըստ որի, հաշվի է առնվելու կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլի անցկացման շրջանակներում ստացված՝ հանրային քննարկման մասնակիցների դիտողությունների եւ առաջարկությունների ավելի քան երկու երրորդը:

Հարկ է նշել նաեւ, որ Կանոնակարգի 162-րդ կետով նախատեսվում է հանրային քննարկման ընթացքում ստացված առաջարկությունների ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ Հանձնաժողովի որոշման նախագծի հետագա նախապատրաստումից Մշակող դեպարտամենտի հրաժարվելու հնարավորությունը:

Դրա հետ մեկտեղ, 2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի հանրային քննարկման արդյունքների հիման վրա դրանց հետագա նախապատրաստումից հրաժարվելու մասին Մշակող դեպարտամենտների կողմից որոշում ընդունելու փաստեր չեն արձանագրվել:

2.3. ԵՏՀ որոշումների նախագծերում ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելցուկային սահմանափակումներ նախատեսող դրույթների բացահայտման մասին տեղեկատվության վերլուծություն

2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի մասով ներկայացված՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին

75 եզրակացությունները պարունակում են 490 դիտողություններ եւ առաջարկություններ, որոնք ուղղված են Միությունում ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների բարելավմանը:

Այդ եղանակով, կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը միջինը պարունակվում է Հանձնաժողովի որոշման նախագծի դրույթների վերաբերյալ 6,5 դիտողություններ եւ (կամ) առաջարկություններ:

Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված դիտողություններն ու առաջարկություններն իրենց բնույթով կարող են դասակարգվել հետեւյալ երեք տեսակների՝

- հայեցակարգային՝ դիտողություններ եւ առաջարկություններ, որոնք ընդհանուր առմամբ վերաբերում են Հանձնաժողովի որոշման նախագծին եւ (կամ) դրա կողմից նախատեսված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մոդելին (մասնավորապես, որոշման նախագծի ընդունման անհիմնավորվածության մասին, դրույթների՝ ոչ թե պարտադիր (նորմատիվ-իրավական), այլ առաջարկվող ձեւով ընդունման բավարար լինելու մասին, Հանձնաժողովի որոշման նախագծի կիրառման ոլորտի (իրավական կարգավորման առարկայի) փոփոխության մասին, Հանձնաժողովի որոշման նախագիծն ուժի մեջ մտնելիս եւ (կամ) դրա ուժի մեջ մտնելու հետաձգումը սահմանելիս անցումային շրջանի սահմանման անհրաժեշտության մասին, փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մեխանիզմի փոփոխումը նախատեսելու մասին, ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի տեղաշարժի ազատությունն ապահովող մոտեցումների փոփոխությանն ուղղված դիտողություններ եւ առաջարկություններ, ինչպես նաեւ Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված կարգավորման հիմնական մոտեցումների փոփոխությանն ուղղված այլ դիտողություններ եւ առաջարկություններ).

- բովանդակալից՝ դիտողություններ եւ առաջարկություններ, որոնք ուղղված են Հանձնաժողովի որոշման նախագծի առանձին դրույթներում

փոփոխությունների կատարմանը եւ (կամ) լրացմանը՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների նկատմամբ ավելցուկային պարտավորությունների սահմանափակումների կամ արգելքների սահմանումը կանխելու, Միության անդամ պետությունների իրավակիրառ պրակտիկայում տարբերությունների առաջացումը չթույլատրելու, ինչպես նաեւ իշխելու լիազորություններն իրականացնելիս չհիմնավորված լայն հայեցողություն նախատեսող դրույթները վերացնելու նպատակով.

- իրավա-տեխնիկական եւ խմբագրական՝ առաջարկություններ եւ դիտողություններ, որոնք ուղղված են Հանձնաժողովի որոշման նախագծի առանձին դրույթներում ճշգրտումների կատարմանը կամ դրանց ձեւակերպման մասով հստակեցմանը՝ նորմատիվ դրույթների լիակատար իրավական որոշակիության եւ շարադրման տրամաբանականության ապահովման նպատակով (օրինակ՝ փաստաթղթի ներքին հղման եւ հղում պարունակող-բլանկետային ապարատի ճշգրտումը, «առկայության դեպքում» լրացուցիչ ձեւակերպումներով՝ տեղեկությունները կամ փաստաթղթերը ներկայացնելու մասին պահանջների ճշգրտումը, «հանձնարարական» եւ կազմակերպչական-կարգադրական բնույթի դրույթների տեղափոխում փաստաթղթի նախագծից դրա հաստատման մասին Հանձնաժողովի որոշման նախագիծ, ուղղագրական, քերականական եւ թվային սխալների ու անճշտությունների ուղղումը, փաստաթղթի դրույթներն իրավաբանական տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելը):

Կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված դիտողությունները եւ առաջարկությունները բաշխվել են հետեւյալ կերպ՝

- հայեցակարգային՝ 33 դիտողություն եւ առաջարկություն (6,8%),

- բովանդակային՝ 403 դիտողություն եւ առաջարկություն (82,2%),

- իրավա-տեխնիկական եւ խմբագրական՝ 54 դիտողություն եւ առաջարկություն (11%):

Տվյալ կատեգորիաների միջեւ դիտողությունների բաժանումն առավել պատկերավոր դարձնելու համար անհրաժեշտ է նշել հայեցակարգային եւ բովանդակային դիտողությունների հետեւյալ օրինակները, որոնք նշվել են ԿԱԳ-ի մասին եզրակացություններում (այդ օրինակների ընդհանրացմամբ՝ ըստ Հանձնաժողովի իրավասության ոլորտի):

Հայեցակարգային բնույթի դիտողությունները, որոնք արտացոլված են Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի մասին եզրակացություններում՝ դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում վերաբերել են մասնավորապես՝

- այն նյութերի ավտոմատ կամ, առնվազն, անհատույց ճանաչման մեխանիզմի բացակայությանը, որոնք նախապատրաստվել են ռեֆերենտ պետության լիազորված մարմնի կողմից գրանցման դոսյեի ուսումնասիրության արդյունքների հիման վրա, այլ պետությունների կողմից (ճանաչման պետությունների կողմից), ինչի հետեւանքով Միության շրջանակներում դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների միասնական շուկայի ձեւավորման նպատակներն ամբողջ ծավալով չեն իրականացվում, իսկ այդպիսի ընդհանուր շուկայի ստեղծումից՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների օգուտներն էապես հավասարվում են.

- նախկինում տրամադրված ազգային փաստաթղթերի գործողության ապահովման, պատշաճ գործելակերպի ներմուծման համար ադապտացման մասով՝ տվյալ ոլորտում Հանձնաժողովի որոշումները գործողության մեջ դնելու համար անցումային շրջան սահմանելու անհրաժեշտությանը.

- այն կլինիկական հետազոտությունների արդյունքների ճանաչման ապահովման անհրաժեշտությանը, որոնց մասով պացիենտների հավաքումն ավարտվել է մինչեւ 2016 թվականի հունվարի 1-ը (այսինքն՝ մինչեւ Միության մասին պայմանագրով նախատեսված՝ դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների ընդհանուր շուկաների գործունեությունն սկսելու ամսաթիվը), եւ որոնք անցկացվել են Միության անդամ պետությունների

օրենսդրությանը համապատասխան եւ (կամ) Միության անդամ պետությունների տարածքի սահմաններից դուրս.

- ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների եւ դրանց արտադրական օբյեկտների վարչական բեռի կրճատման անհրաժեշտությանը՝ դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների գրանցման ընթացակարգն իրականացնելիս տեսչական ստուգումներ անցկացնելու մասով, այդ թվում՝ այդպիսի տեսչական ստուգումներ անցկացնելու նպատակահարմարությանը՝ հաշվի առնելով գնահատման համակարգը եւ ռիսկերի կառավարումը.

- Հանձնաժողովի՝ դեղամիջոցների շրջանառությանը վերաբերող մի շարք որոշումների նախագծերի կիրառման ոլորտը (դրոշմավորում, լաբորատոր եւ արտադրական գործելակերպ) անասնաբուժական պատրաստուկների վրա տարածելու անհիմնավորվածությանը.

- Հանձնաժողովի՝ դեղամիջոցների շրջանառության ոլորտում մի շարք ակտերի ընդունման անհրաժեշտությանը՝ հանձնարարականների ձեւով եւ ոչ թե՝ Հանձնաժողովի որոշումների (օրինակ՝ դեղապատրաստուկը դեղատոմսային կամ ոչ դեղատոմսային բացթողման կատեգորիաներին դասելու վերաբերյալ հանձնարարականներ):

Հանձնաժողովի՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում կիրառվող որոշումների նախագծերի ԿԱԳ-ի մասին եզրակացություններում արտացոլված հայեցակարգային առաջարկությունները վերաբերում են՝

- չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների արդյունքների եւ ռեֆերենտ պետություններում այն փաստաթղթերի ավտոմատ փոխադարձ ճանաչման ապահովման անհրաժեշտությանը, որոնք հաստատում են այդպիսի աշխատանքների համապատասխանությունը՝ սահմանված պահանջներին.

- Հանձնաժողովի որոշումների նախագծերի կիրառման ոլորտի ճշգրտման անհրաժեշտությանը, այն մասով, որ նրանց կողմից նախատեսված

պահանջները եւ ընթացակարգերը տարածվում են բացառապես այն աշխատանքների արդյունքների վրա, որոնք անցկացվել են չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման ոլորտում:

Սանիտարական եւ անասնաբուժասանիտարական միջոցառումների կիրառման ոլորտում՝ ակտերի նախագծերի մասով հայեցակարգային դիտողություն է համարվում միասնական սանիտարական եւ անասնաբուժասանիտարական պահանջների եւ ընթացակարգերի սահմանման անթույլատրելիության մասին նշումը՝ առանց բավարար հիմքեր բերելու, քանի որ Միության մասին պայմանագրին (56-րդ հոդվածի 1-ին կետ) համապատասխան՝ սանիտարական եւ անասնաբուժասանիտարական միջոցառումները կիրառվում են այնպիսի սկզբունքների հիման վրա, որոնք ունեն գիտական հիմնավորում, եւ միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է մարդկանց եւ կենդանիների առողջության պաշտպանության համար:

Մաքսային կարգավորման ոլորտում Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի մասին եզրակացություններում 2015 թվականին կատարվել են հայեցակարգային բնույթի դիտողություններ, որոնք վերաբերում են՝

- արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների վրա մաքսային նպատակների համար չպահանջվող տեղեկություններ ներկայացնելու համար պարտավորություններ դնելու եւ Միության անդամ պետությունների մաքսային մարմիններին մաքսային վարչարարության նպատակներին չվերաբերող տեղեկությունների ուսումնասիրության հետ կապված գործառույթներով օժտելու չհիմնավորվածությանը:

- մաքսային մարմինների կողմից որոշումներ կայացնելիս փոխադրողների կողմից ներկայացվող տեղեկությունների հաշվառումն ապահովելու անհրաժեշտությանը՝ Միության մաքսային տարածք օդային տրանսպորտով ներմուծվող ապրանքների մասին պարտադիր նախնական տեղեկացման նպատակների իրականացումն ապահովելու նպատակով:

Իր հերթին, 2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի մասին եզրակացություններում նշված բովանդակային դիտողությունները եւ առաջարկությունները, մասնավորապես, վերաբերում էին հետեւյալին՝

- դեղամիջոցների շրջանառության ոլորտում՝ դեղամիջոցների գրանցման հետ կապված ընթացակարգերի կատարման հստակ ժամկետների սահմանման անհրաժեշտությանը, ինչպես նաեւ գնահատման եւ հայեցողական ձեւակերպումների կոնկրետացմանը՝ իրավակիրառ պրակտիկայում տարբեր մոտեցումներ թույլ չտալու նպատակով.

- բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում՝ նախագծերի դրույթները Միության իրավունքին խիստ համապատասխանեցման անհրաժեշտությանը եւ այդ նախագծերի ձեւակերպումների ճշգրտմանը՝ դրանց ոչ միանշանակ մեկնաբանության հնարավորությունը վերացնելու նպատակով.

- մաքսային վարչարարության ոլորտում՝ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար՝ մաքսային ձեւականությունների պարզեցման անհրաժեշտությանը, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթեր տրամադրելուն անցնելը, ինչպես նաեւ մաքսային փոխադրողների ժամանակավոր եւ լոգիստիկական ծախքերի կրճատմանը.

- սանիտարական եւ անասնաբուժասանիտարական միջոցառումների ոլորտում՝ նախագծերի դրույթների ձեւակերպումների կոնկրետացմանը՝ դրանց մեկնաբանման եւ կիրառման միատեսակ գործելակերպ ապահովելու նպատակով.

- տրանսպորտային միջոցների, ինքնագնաց մեքենաների եւ այլ տեսակի տեխնիկայի շրջանառության վարչարարության ոլորտում՝ էլեկտրոնային անձնագրերի տեղեկությունների ծավալների կրճատմանը կամ հայտատուի հայեցողությամբ՝ որոշ տեղեկությունների տրամադրման հնարավորության սահմանմանը, մինչեւ որոշման նախագիծն ուժի մեջ մտնելը եւ դրանով նախատեսված անցումային շրջանների ընթացքում՝ թղթային կրիչով տրամադրված անձնագրերի վերաձեւակերպման կարգի հստակեցմանը, Միասնական ռեեստրում ներառված պատրաստող կազմակերպությունների

իրավունքների երաշխիքների ապահովմանը՝ էլեկտրոնային անձնագրերի ձեւակերպումն ինքնուրույն իրականացնելու մասով, տրանսպորտային այն միջոցների ժամանակավոր ներմուծման ժամկետների հստակեցման անհրաժեշտությանը, որոնց համար էլեկտրոնային անձնագրերի ձեւակերպումն անհրաժեշտ է, տրանսպորտային միջոցների (ամրաշրջանակ), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների ազատ տեղաշարժի համար խոչընդոտների առաջացումը կանխելու անհրաժեշտությանը՝ կապված ազգային օրենսդրությամբ սահմանվող այն լրացուցիչ տեղեկությունների հետ, որոնք կարող են նշվել էլեկտրոնային փաստաթղթերում.

- չափումների միասնականության ապահովման ոլորտում՝ որոշումների ընդունման ժամկետների եւ կարգի մասով իրավական անորոշության վերացմանը՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների արդյունքները հաստատելու ընթացակարգերի շրջանակներում:

Անհրաժեշտ է նաեւ ուշադրություն դարձնել ԿԱԳ-ի մասին եզրակացություններում նշված դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժնին, որը որոշվել է այն նախագծերի թվով, որոնք ԿԱԳ-ի մասին եզրակացությունների առկայության դեպքում քննարկվել են 2015 թվականին կայացած Հանձնաժողովի կոլեգիայի նիստերին:

Հանձնաժողովի (Խորհրդի եւ Կոլեգիայի) 75 որոշումների նախագծերից, որոնց մասով Աշխատանքային խմբի կողմից տրվել են կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններ, 2015 թվականին Հանձնաժողովի կոլեգիայի նիստերին քննարկվել է Հանձնաժողովի 54 որոշումների նախագիծ (72%):

Կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված դիտողությունների եւ առաջարկությունների համեմատության արդյունքներով, Հանձնաժողովի կոլեգիայի որոշումներով կամ Հանձնաժողովի կոլեգիայի կարգադրություններով հաստատված՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի խմբագրությունների հետ միասին (ԵՏՀ խորհրդի որոշումների

նախագծերի մասով՝ Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի քննարկման արդյունքների հիման վրա՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններում նշված դիտողությունների եւ առաջարկությունների հաշվի առնելու բաժինը կազմում է 65,1%՝ հաշվի է առնվել Հանձնաժողովի կոլեգիայի կողմից քննարկված եւ ընդունված (հաստատված)՝ ԵՏՀ 54 որոշումների նախագծերի մասով՝ 370 դիտողություններից եւ առաջարկություններից 241-ը:

Ընդ որում, ԵՏՀ կոլեգիայի կողմից ընդունված (հաստատված)՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված դիտողությունների եւ առաջարկությունների բաժինը՝ դրանց բնույթից կախված՝ ունի հետեւյալ պատկերը՝

- հայեցակարգային դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժինը կազմել է 20% (30-ից 6-ը).

- բովանդակային դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժինը կազմել է 67% (293-ից 195-ը).

- իրավա-տեխնիկական եւ խմբագրական դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժինը կազմել է 85% (47-ից 40-ը):

Հարկ է նաեւ նշել, որ Աշխատանքային խմբի ղեկավարի եւ Համահավաք դեպարտամենտի կողմից ձեւավորվել է Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության՝ կառուցվածքավորված եւ ստանդարտացված օրինակելի ձեւ, որի համաձայն, նշված եզրակացության մեջ եւ դրան կից հավելվածում հաջորդաբար շարադրվում են տեղեկություններ, որոնք ենթակա են կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ պարտադիր նշման՝ «Աշխատանքային խմբի մասին» հիմնադրույթի 26-րդ կետի պահանջներին համապատասխան:

Տվյալ օրինակելի ձեւին համապատասխան՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ անմիջապես նշվում են՝

- մշակող դեպարտամենտի կողմից՝ կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլ անցկացնելու մասին տեղեկատվությունը՝ նշելով, թե արդյոք Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկումն անցկացնելիս ամբողջ ծավալով պահպանվել են Կանոնակարգով սահմանված ընթացակարգերը.

- մշակող դեպարտամենտի կողմից՝ խնդրի սահմանման ճշգրտության եւ ամբողջականության մասին տեղեկություններ, որի առկայությամբ պայմանավորված, նախապատրաստվել է Հանձնաժողովի որոշման նախագիծը, ինչպես նաեւ կարգավորման նպատակները.

- ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա՝ Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության բնույթի մասին եզրահանգումը (դրական կամ բացասական).

- Հանձնաժողովի որոշման նախագծի եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի լրամշակման հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության եւ դրան կից հավելվածի մեջ նշված դիտողությունները եւ առաջարկությունները:

Կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության հավելվածում բերվում են՝

- Հանձնաժողովի որոշման նախագծի մասով այն դիտողությունների եւ առաջարկությունների ցանկը, որոնք ուղղված են դրանով նախատեսված՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ավելցուկային պարտավորությունների, սահմանափակումների եւ (կամ) արգելքների, ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների չհիմնավորված ծախսերի, Միության տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար խոչընդոտների վերացմանը.

- մեթոդական այն դիտողությունները եւ առաջարկությունները, որոնք ուղղված են Հանձնաժողովի որոշման նախագծի տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում մշակող դեպարտամենտի կողմից՝ կարգավորման այնպիսի որակական բնութագրերի նկարագրության հստակեցմանը, ինչպիսիք են՝ պաշտպանվող անձանց խմբերը եւ կարգավորման հասցեատերերը, սահմանվող վարման պարտադիր կանոնները, կարգավորման նպատակներին հասնելու մեխանիզմը, առաջարկվող կարգավորման այլընտրանքային տարբերակները:

Այդ եղանակով, 2015 թվականին Աշխատանքային խմբի կողմից նախապատրաստված՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում նշված դիտողությունների եւ առաջարկությունների ճնշող մասը կրել է բովանդակային բնույթ եւ ուղղված է եղել Հանձնաժողովի որոշումների նախագծերի առանձին դրույթներում փոփոխությունների եւ լրացումների կատարմանը՝ ձեռնարկատիրական գործունեություն վարելու համար՝ ավելցուկային պահանջների, պարտավորությունների, արգելքների կամ այլ սահմանափակումների սահմանման հնարավորությունը բացառելու նպատակով:

Գլուխ 3. Դիտանցում անցկացնելու արդյունքներով հայտնաբերված խնդիրները եւ դրանց լուծման վերաբերյալ առաջարկները

3.1. Կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ

3.1.1. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելիս օգտագործվող փաստաթղթերի ձեւերի եւ դրանց կազմման կանոնների ճշգրտման անհրաժեշտությունը

Ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշումների նախագծերի ազդեցության հետեւանքների մասին Մշակող դեպարտամենտների կողմից տեղեկատվական-վերլուծական տեղեկանքներ կազմելու գործելակերպի վերլուծության եւ ընդհանրացման անցկացման արդյունքներով առկա է Փաստաթղթաշրջանառության կանոններին կից թիվ 5 հավելվածով սահմանված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի ձեւի կատարելագործման վերաբերյալ հետեւյալ առաջարկությունը:

ԿԱԳ ընթացակարգի դիտանցում անցկացնելու եւ Համահավաք դեպարտամենտի կողմից համապատասխան տարեկան հաշվետվություններ նախապատրաստելու նպատակով առաջարկում ենք տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի 14-րդ կետը (ԵՏՀ որոշման նախագծի հանրային քննարկում անցկացնելու վերաբերյալ տեղեկություններ) կազմելուն ներկայացվող պահանջները լրացնել հանրային քննարկում անցկացնելու ընթացքում ստացված առաջարկությունների ընդհանուր թվի վերաբերյալ տեղեկատվությունը Մշակող դեպարտամենտի կողմից նշելու անհրաժեշտության վերաբերյալ դրույթով՝ այն դիտողությունների եւ առաջարկությունների թվի ներկայացմամբ, որոնք հաշվի են առնվել լիովին, հաշվի են առնվել մասամբ եւ մերժվել են:

Բացի այդ, 2016 թվականին ԿԱԳ-ի շրջանակներում անցկացվելու է Հանձնաժողովի որոշման նախագծի հանրային քննարկում անցկացնելու համար հարցաթերթիկի ձեւի վերլուծություն սույն ձեւի III բաժնով նախատեսված՝ հանրային քննարկման մասնակցի կողմից լրացման համար պարտադիր հարցերի ցանկի հնարավոր կրճատման մասով՝ հարցաթերթիկների լրացումը պարզեցնելու նպատակով:

Շահագրգիռ անձանց ուղղված հարցերի ցանկը պարունակող հարցաթերթիկն առաջարկվում է կրճատել եւ դրանում ձեւակերպել այնպիսի ձեւակերպումներ, որոնք կշարադրվեին հնարավորինս հակիրճ, կպարունակեին հստակ եւ տարբեր մեկնաբանումների տեղիք չտվող իմաստ, քանի որ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչները ոչ միշտ են տիրապետում առաջադրված հարցերի պատասխանների համար առանձնահատկությանը համապատասխան գիտելիքների:

Ընդ որում, Միության անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչներին ԿԱԳ ընթացակարգին մասնակցելուն առավելագույնս ներգրավելու եւ նրանց կողմից հարցաթերթիկները լրացնելու որակի բարձրացման նպատակով առաջարկվում է Միության անդամ պետություններում անցկացնել արտագնա թեմատիկ սեմինարներ՝ ձեռնարկատիրական միավորումների եւ տնտեսավարող սուբյեկտների՝ դրանցում «տեղերում» մասնակցելուն ներգրավմամբ:

Բացի այդ, անցկացվելու է ԿԱԳ-ի մասին եզրակացություններում նշվող տեղեկությունների ցանկի վերլուծություն, որը նախատեսված է Կանոնակարգի 144-րդ եւ 147-րդ կետերով, ինչպես նաեւ Աշխատանքային խմբի մասին հիմնադրույթի 26-րդ կետով:

Սույն վերլուծության անցկացման արդյունքներով պլանավորվում է նախապատրաստել կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության ստանդարտացված ձեւ, համաձայն որի՝ հենց ԿԱԳ-ի վերաբերյալ եզրակացության տեքստում կնշվեն ընդհանուր առմամբ ձեռնարկատիրական

գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի որոշման նախագծի ազդեցության վերաբերյալ եզրահանգումները, իսկ եզրակացության հավելվածում կներկայացվեն Հանձնաժողովի որոշման նախագծի կոնկրետ դրույթների վերաբերյալ Աշխատանքային խմբի անդամների բովանդակալից դիտողություններն ու առաջարկությունները:

3.1.2. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու կազմակերպական եւ տեղեկատվական-հեռահաղորդակցական պայմանների հնարավոր բարելավումները

2015 թվականին Համահավաք դեպարտամենտի կողմից՝ Հանձնաժողովի Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի հետ համատեղ, արդեն կատարվել է Միության պաշտոնական կայքի այն ծառայությունների կատարելագործման լայնածավալ աշխատանք, որոնք վերաբերում են Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացման տեղեկատվական–հեռահաղորդակցական ենթակառուցվածքի արդյունավետ գործելու ապահովմանը:

Հետագայում անհրաժեշտ ենք համարում ապահովել Միության պաշտոնական կայքի՝ ԿԱԳ-ի հետ կապված ծառայությունների անխափան գործելը, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերն ըստ լրացուցիչ տեքստային եւ դասակարգային պարամետրերի որոնելու մասով, ինչպես նաեւ ԵՏՀ որոշումների նախագծերի «հաշվիչների» ստույգ աշխատանքը:

Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում ապահովել Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը Միության պաշտոնական կայքում այն որոշումների հրապարակման էլեկտրոնային հասցեներին հղումներով լրացնելը, որոնք ընդունվել են Հանձնաժողովի կողմից:

Պետք է նաեւ նշել, որ Կանոնակարգի 153-րդ կետին համապատասխան՝ Կանոնակարգի 152-րդ կետի (ԿԱԳ-ի անցկացման տեղեկատվական ապահովման) իրագործման, ինչպես նաեւ ցանցի այլ ռեսուրսների, այդ թվում անդամ պետությունների՝ կարգավորման հարցերով պաշտոնական պորտալների, թեմատիկ ֆորումների, ցանցային համայնքների հետ՝ կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու վերաբերյալ Միության պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությամբ փոխանակվելու հնարավորության ապահովման համար անհրաժեշտ տեխնոլոգիական, ծրագրային եւ լեզվաբանական միջոցների նկատմամբ պահանջները պետք է սահմանվեն Միության պաշտոնական կայքի ձեւավորման եւ վարման կարգով:

Միության պաշտոնական կայքի ձեւավորման եւ վարման կարգը Հանձնաժողովի կողմից մինչ այժմ չի հաստատվել:

Նշված կարգի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում հետեւյալ հարցերի կանոնակարգումը՝

- ֆայլերի տեղադրման միասնական ձեւաչափեր (.doc(x) եւ (կամ) .pdf ընդարձակմամբ).

- կայքում որոշման նախագծի բոլոր խմբագրությունների տեղադրման անհրաժեշտություն (հանրային քննարկման համար, հանրային քննարկման արդյունքների հիման վրա արված լրամշակման արդյունքներով, լրամշակումների արդյունքներով՝ հաշվի առնելով կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը).

- Մշակող դեպարտամենտի կողմից հանրային քննարկում անցկացնելու վերաբերյալ ծանուցում ուղարկելու հնարավորություն՝ անմիջապես Միության պաշտոնական կայքից («անձնական աշխատասենյակից»).

- հանրային քննարկման համար տեղադրված՝ որոշման կոնկրետ նախագծերի դիտումների վիճակագրության վերահսկողության անհրաժեշտություն.

- ցանցային համայնքների էջերում եւ խմբերում Հանձնաժողովի որոշումների նախագծերին հղումների արագ տեղադրման հնարավորություն («Վ կոնտակտե», «Ֆեյսբուք», «Թվիթեր» եւ այլն):

Կշարունակվի Հանձնաժողովի որոշումների նախագծերի՝ ԿԱԳ անցկացնելու ներքին ընթացակարգերի ավտոմատացման, մասնավորապես՝ ԿԱԳ անցկացնելու հարցերով փաստաթղթերը եւ նյութերը համակարգող տեղեկատվական բազայի ձեւավորման, ինչպես նաեւ Միության կայքում Աշխատանքային խմբի անդամների անձնական աշխատասենյակների ստեղծման աշխատանքը: Ընդ որում, տվյալ ուղղությամբ աշխատանքն առաջարկվում է անցկացնել Միության կայքի առկա ծառայությունների կատարելագործման եւ Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի գոյություն ունեցող ծրագրա-ապարատային միջոցների շրջանակներում, որը չի հանգեցնի Միության բյուջեի լրացուցիչ ծախսերի:

3.1.3. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու կարգի հնարավոր փոփոխությունները

2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու գործելակերպի վերլուծության եւ ընդհանրացման հիման վրա առկա է ԿԱԳ գործընթացի անցկացման կարգի կատարելագործման վերաբերյալ հետեւյալ առաջարկությունը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները նախապատրաստելու սեղմ ժամկետներին:

Կանոնակարգի 165-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված է, որ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստումն Աշխատանքային խմբի կողմից ապահովվում է Մշակող դեպարտամենտից Հանձնաժողովի որոշման նախագիծը, տեղեկատվական-

վերլուծական տեղեկանքը եւ հանրային քննարկման շրջանակներում առաջարկությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունն ստանալու օրվանից՝ 15 օրացուցային օրվա ընթացքում:

Դրա հետ միասին պետք է նշել, որ Կանոնակարգի նախագիծը նախապատրաստելիս կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման տվյալ ժամկետն ի սկզբանե սահմանվել է 15 օրացուցային օր տեւողությամբ՝ ելնելով նրանից, որ տվյալ ժամկետը բավարար է՝ Համահավաք դեպարտամենտի կողմից ԿԱԳ-ի մասին եզրակացությունն ինքնուրույն նախապատրաստելու համար:

Հետագայում Կանոնակարգի նախագծի նախապատրաստման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստումն Աշխատանքային խմբի կողմից իրականացնելու վերաբերյալ, այսինքն՝ կոլեգիալ կերպով եւ դրա նիստերի անցկացմամբ:

Ընդ որում, կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման՝ Կանոնակարգի հաստատված խմբագրությամբ սահմանված ժամկետը մնացել է անփոփոխ՝ 15 օրացուցային օր:

Հարկավոր է հաշվի առնել, որ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման կազմակերպական մոդելի նման փոփոխությունը գործնականում զգալիորեն երկարացնում է ԿԱԳ-ի մասին եզրակացության նախապատրաստման համար անհրաժեշտ ժամկետը:

Այսպես, Հանձնաժողովի որոշման նախագիծը եւ դրան կից նյութերի փաթեթն ստանալուց հետո Աշխատանքային խմբի պատասխանատու քարտուղարը համապատասխան հարցը ներառում է Աշխատանքային խմբի առաջիկա նիստի օրակարգում: Միեւնույն ժամանակ, աննպատակահարմար է Հանձնաժողովի որոշումների յուրաքանչյուր ստացված նախագծի վերաբերյալ առանձին նիստեր անցկացնելը, ինչի հետեւանքով Աշխատանքային խմբի նիստի՝ մի քանի հարցից կազմված օրակարգի ձեւավորման վրա ժամանակ է վատնվում:

Աշխատանքային խմբի նիստի օրակարգը հաստատելուց եւ այդ նիստի անցկացման ամսաթիվը եւ ժամանակը որոշելուց հետո օրակարգի հարցերին վերաբերող համապատասխան տեղեկատվությունն ու նյութերը պետք է Աշխատանքային խմբի պատասխանատու քարտուղարի կողմից ուղարկվեն Աշխատանքային խմբի անդամներին ոչ ուշ, քան Աշխատանքային խմբի նիստի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Եզրակացությունն Աշխատանքային խմբի նիստ անցկացնելու սխեմայի միջոցով նախապատրաստելու դեպքում Հանձնաժողովի որոշման համապատասխան նախագիծը Համահավաք դեպարտամենտի կողմից փաստացի երկու անգամ է ուսումնասիրվում՝

- սկզբնապես Հանձնաժողովի որոշման նախագծի մշակման արդյունքներով Համահավաք դեպարտամենտի կողմից կազմվում է Հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ պարունակող տեղեկանք, որը զեկուցվում է Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Աշխատանքային խմբի նիստին համապատասխան հարցերը քննարկելու առաջարկով.

- Աշխատանքային խմբի նիստ անցկացնելուց հետո Հանձնաժողովի որոշման նախագծի ուսումնասիրության արդյունքներն ամրագրվում են նիստի արձանագրության մեջ, որն ստորագրվում է նիստի անցկացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, եւ որը հաշվի առնելով, Համահավաք դեպարտամենտի կողմից նախապատրաստվում է կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախագիծ:

Հաճախ Հանձնաժողովի որոշման նախագծերը Մշակող դեպարտամենտի կողմից ուղարկվում են Համահավաք դեպարտամենտ եւ Աշխատանքային խմբի անդամներին հանգստյան կամ տոնական օրերի նախօրեին, ինչն Աշխատանքային խմբի նիստում Հանձնաժողովի որոշման նախագիծը ուսումնասիրության ներկայացնելուն նախապատրաստելիս էլ ավելի է կրճատում հարցը մշակելու եւ դրա արդյունքներով կարգավորման ազդեցության գնահատման մասին

եզրակացություն նախապատրաստելու ժամանակը (մեծ մասամբ այսպիսի ժամկետները կրճատվում են «ամանորյա արձակուրդների» եւ «մայիսյան տոնական օրերի» ժամանակահատվածում):

Հաշվի առնելով վերոնշյալը, Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացության նախապատրաստման օպերատիվությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ենք համարում Համահավաք դեպարտամենտին սույն ուղղությամբ աշխատանքների ինտենսիվացման համար անհրաժեշտ լրացուցիչ հաստիքային միավորներ հատկացնելու հարցի ուսումնասիրությունը:

Որպես այլընտրանքային տարբերակ՝ առաջարկվում է ուսումնասիրել ԿԱԳ-ի մասին եզրակացությունների նախապատրաստման՝ Կանոնակարգով սահմանված ժամկետների երկարաձգման հարցը՝ 15 օրացուցային օրվանից 15 աշխատանքային օրվա:

3.1.4. Կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու մեթոդաբանության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ

Կանոնակարգին համապատասխան՝ 2015 թվականին Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն ացկացվել է ըստ կարգավորման հիմնական որակական բնութագրերի, այսինքն՝ Մշակող դեպարտամենտի կողմից նշված այն խնդրին, որի առկայության հետ կապված էլ նախապատրաստվել է Հանձնաժողովի որոշման նախագիծը, կարգավորման նպատակին, դրան հասնելու մեխանիզմին, առաջարկվող կարգավորման այլընտրանքային տարբերակներին Հանձնաժողովի որոշման նախագծի համապատասխանության վերլուծության մասով:

Հետագայում նպատակահարմար ենք համարում, կարգավորման հիմնական որակական բնութագրերի վերլուծության հիման վրա ԿԱԳ-ի համակարգի գործելու հետ մեկտեղ, պիլոտային ծրագրերի անցկացման արդյունքներով գնահատել

կարգավորման ազդեցության՝ ըստ քանակական պարամետրերի գնահատման համակարգի ներդրմանն աստիճանաբար անցնելու հնարավորությունը: Նպատակահարմար է նաեւ մշակել քանակական գնահատման մեթոդների հիման վրա Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի անցկացման մեթոդաբանության վերաբերյալ համապատասխան առաջարկություններ:

Այսպիսի մոտեցումը թույլ կտա հստակ սահմանել տնտեսավարող սուբյեկտների այն լրացուցիչ պոտենցիալ ծախսերի չափը, որոնք կպահանջվեն Հանձնաժողովի որոշումների նախագծերի պահանջների կատարման համար՝ դրանց ընդունման դեպքում:

Անհրաժեշտ ենք համարում նաեւ մշակել Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի տեղեկատվական-վերլուծական ենթահամակարգի գործիքների օգտագործման հնարավորությունը՝ վերազգային կարգավորման ներմուծումից տնտեսավարող սուբյեկտների ծախսեր-օգուտների քանակական պարամետրերի գնահատման մեթոդաբանության հիման վրա ԿԱԳ-ի ներդրման համար:

3.2. Ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պիլոտային նախագծի իրագործման վերաբերյալ առաջարկություններ

Առաջարկվում է մշակել ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պիլոտային նախագծի իրագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման հարցը:

Ընդ որում, ելնում ենք այն մոտեցումից, համաձայն որի այդ պիլոտային նախագծի իրագործման շրջանակներում փաստացի ազդեցության գնահատումը կարող է իրականացվել Հանձնաժողովի այն ընդունված որոշումների նկատմամբ,

որոնց նախագծերի նկատմամբ նախկինում անցկացվել է կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգ:

Սույն աշխատանքի շրջանակներում անհրաժեշտ է Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու մեթոդաբանության մասով նախապես նախապատրաստել առաջարկություններ հետեւյալ փուլերով՝ ընդունված ակտերի ընտրություն, դրանց կիրառման գործելակերպի վերլուծություն, անցկացված վերլուծության արդյունքներով եզրահանգումների նախապատրաստում:

Այսպիսի նախագծի իրագործումը թույլ կտա պիլոտային ռեժիմով անցկացնել իրական իրավիճակի դիտանցում Միությունում գործարարությամբ զբաղվելու պայմանների վրա Հանձնաժողովի՝ ընդունվող որոշումների ազդեցության ոլորտում:

Ընդ որում, նշված աշխատանքի շրջանակներում առաջարկվում է կենտրոնանալ Հանձնաժողովի որոշումների այն ընդունված նախագծերի կարգավորման նպատակներին հասնելու վերլուծության անցկացման վրա, որոնք վերազգային կարգավորման շրջանակներում Միության բոլոր անդամ պետությունների ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների նկատմամբ պահանջներ են սահմանում:

Եզրակացություն

Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի 2015 թվականին անցկացված դիտանցման արդյունքներով կարելի է անել հետեւյալ եզրահանգումները:

Առաջին՝ 2015 թվականի առաջին կիսամյակում ողջ ծավալով ավարտվել է այն կազմակերպահիրավական հիմքի, մեթոդական բազայի եւ տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքի ձեւավորումը, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգն անցկացնելու համար:

Երկրորդ՝ Մշակող դեպարտամենտներն ապահովում են Հանձնաժողովի որոշումների այն նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացումը, որոնց նկատմամբ այդպիսի ընթացակարգ անցկացնելն անհրաժեշտ է:

Երրորդ՝ Մշակող դեպարտամենտների կողմից հիմնականում ապահովվում է Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու՝ Կանոնակարգի IX բաժնով սահմանված ընթացակարգի պահպանումը:

Չորրորդ՝ կարգավորման ազդեցության ընթացիկ գնահատման փուլն անցկացնելիս Մշակող դեպարտամենտներն ընդհանուր առմամբ որակյալ կերպով լրացնում են տեղեկատվական-վերլուծական տեղեկանքները եւ հարցաթերթիկները՝ հաշվի առնելով Փաստաթղթաշրջանառության կանոններին կից թիվ 5 հավելվածի պահանջները, ինչպես նաեւ հաշվի են առնում Հանձնաժողովի որոշումների նախագծերի վերաբերյալ դրանց հանրային քննարկման ընթացքում ստացվող դիտողությունների եւ առաջարկությունների զգալի մասը:

Հինգերորդ՝ Աշխատանքային խումբը եւ Համահավաք դեպարտամենտն ապահովում են Մշակող դեպարտամենտներից ստացվող՝ Հանձնաժողովի բոլոր որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունների ժամանակին նախապատրաստումը:

Վեցերորդ՝ Մշակող դեպարտամենտը հաշվի է առնում Հանձնաժողովի որոշումների նախագծերի վերաբերյալ՝ կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություններում պարունակվող դիտողությունների եւ առաջարկությունների զգալի մասը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության մարմնի որոշման նախագծի հանրային քննարկման արդյունքներով ստացված մեկնաբանությունների եւ առաջարկությունների

Որոշման նախագծի անվանումը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի ««2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումն անցկացնելու դիտանցման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարեկան հաշվետվության վերաբերյալ» Եվրասիական միջկառավարական խորհրդի կարգադրության նախագծի մասին» որոշման նախագիծ:

թիվ ը/կ	Որոշման նախագծի հանրային քննարկման շրջանակներում ստացված մեկնաբանությունները եւ առաջարկությունները	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ որոշման նախագծի նախապատրաստման համար պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշումը
1	Կարինա Մարատի Գաբիտովա՝ ««Մետրան» արդյունաբերական խումբ» բաժնետիրական ընկերության արտաքին տնտեսական գործունեության ապահովման մասնագետ (karina.gabitova@emerson.com)՝ 1. Ինչպե՞ս է իրականացվելու փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պլանի նախագծի ձեւավորումը:	1. Զեկույցի նախագծի 3-րդ գլխի 3.2 պարբերությանը համապատասխան՝ ենթադրվում է, որ Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պլանի նախագծի ձեւավորումը կիրականացվի Համահավաք դեպարտամենտի կողմից՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների,

		Միության անդամ պետությունների լիազորված պետական մարմինների եւ գործարար համայնքի առաջարկները: Ընդ որում, առաջարկվում է Միության պաշտոնական ինտերնետային կայքում անցկացնել տվյալ պլանի նախագծի հանրային քննարկում:
	2. Հնարավո՞ր է տվյալ պլանի մեջ ներառել ԵՏՀ կոլեգիայի այն որոշումները, որոնց նկատմամբ արդեն անցկացվել է ԿԱԳ ընթացակարգ:	2. Այո, հնարավոր է: Այսպես, Հանձնաժողովի՝ ընդունված որոշման փաստացի ազդեցության գնահատում անցկացնելիս առաջարկվում է կենտրոնանալ Հանձնաժողովի համապատասխան որոշման նախագծի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելիս Մշակող դեպարտամենտի կողմից տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում հայտարարված՝ կարգավորման նպատակներին հասնելու վերլուծություն անցկացնելու վրա:
	3. Ինչի՞ հիման վրա կամ ըստ ի՞նչ ցուցանիշների է անցկացվելու փաստացի ազդեցության գնահատումը:	3. Ցուցանիշների ցանկը, ըստ որոնց անցկացվելու է փաստացի ազդեցության գնահատումը, պլանավորվում է սահմանել փաստացի ազդեցության գնահատման հատուկ մեթոդաբանությամբ, որը մշակելը նախատեսվում է հետագայում: Նախապես ելնում ենք նրանից, որ Հանձնաժողովի՝ ընդունված որոշման փաստացի ազդեցության գնահատում անցկացնելիս անհրաժեշտ է վերլուծել կարգավորման նպատակներին հասնելը դրա կիրառման փորձի շրջանակներում, ինչպես նաեւ համադրել ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ծախսերի եւ ծախքերի վերաբերյալ տվյալները կարգավորման դրական արդյունքների եւ ազդեցությունների հետ:

2	Դանիիլ Բորիսի Ցիգանկով՝ «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի ԿԱԳ կենտրոնի տնօրեն (dtsygankov@hse.ru)՝ 1. 2015 թվականի Հաշվետվությունում չկան եվրասիական ԿԱԳ-ի հիմնական փուլերի որակի (տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների լրացման որակի, հանրային քննարկումների կամ խորհրդակցությունների անցկացման որակի, ԿԱԳ-ի մասին եզրակացությունների նախապատրաստման որակի) հստակ ցուցանիշներ: Առաջարկում եմ հաշվարկել եւ 2015 թվականի Հաշվետվության մեջ ավելացնել գոնե մեկական որակի ցուցանիշ, ինչը ժամանակի ընթացքում թույլ կտա վերլուծել դրանց ամենամյա դինամիկան:	1. Ելնում ենք նրանից, որ Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ ընթացակարգն անցկացնելու որակի եւ արդյունավետության հիմնական ցուցանիշները հետեւյալն են՝ - հանրային քննարկում անցկացնելու ընթացքում ստացված դիտողությունները եւ առաջարկությունները Մշակող դեպարտամենտների կողմից հաշվի առնելու մակարդակը. - ԿԱԳ-ի մասին եզրակացություններում նշված դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու մակարդակը: Տվյալ ցուցանիշները ներկայացված են Հաշվետվության նախագծի 2-րդ գլխի 2.2 եւ 2.3 պարբերություններում, եւ դրանց նշանակությունները վկայում են Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ ընթացակարգն անցկացնելու որակի եւ արդյունավետության բավականին բարձր մակարդակի մասին: Այսպես, ընթացիկ գնահատման (հանրային քննարկման) փուլում ստացված դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժինը կազմել է 66,9%, իսկ վերջնական գնահատման (ԿԱԳ-ի մասին եզրակացության նախապատրաստման) փուլի շրջանակներում ստացված դիտողությունները եւ առաջարկությունները հաշվի առնելու բաժինը՝ 65,1%:

	1.1. Մշակող դեպարտամենտների կողմից տեղեկատվական-վերլուծական տեղեկանքների նախապատրաստման մասով՝ որոշման նախագիծը մշակելիս կարգավորման առնվազն երկու այլընտրանքի ուսումնասիրություն. այլընտրանքների ուսումնասիրությունը, վերլուծությունը եւ համադրությունը ԿԱԳ-ի անբաժան մասն է, եւ առանց այս բաղադրիչի ողջ ընթացակարգը վերածվում է ձեւական քայլերի կատարման: Այսպիսի մոտեցումը համապատասխանում է ինչպես ՏՀԶԿ-ի ժամանակակից դիրքորոշմանը («Economic Policy Reforms: Going for Growth 2013» զեկույց), այնպես էլ Եվրոպական հանձնաժողովի՝ ազդեցության գնահատման նոր ձեռնարկին (Better Regulation Guidelines), որն ուժի մեջ է մտել 2015 թվականի մայիսին:	1.1. Պետք է նշել, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ներքին փաստաթղթաշրջանառության կանոններին կից թիվ 5 հավելվածով (հաստատվել է ԵՏՀ կոլեգիայի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 46 որոշմամբ) նախատեսված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի ձեւում, բացի 7-րդ՝ «Առաջարկվող կարգավորման այլընտրանքների ուսումնասիրություն» կետից, նախատեսված է նաեւ 13-րդ՝ «Կարգավորման միջազգային եւ ազգային փորձի ուսումնասիրություն» կետը: Սույն կետի շրջանակներում Մշակող դեպարտամենտին անհրաժեշտ է նկարագրել հարաբերությունների կանոնակարգման գոյություն ունեցող բոլոր մոդելները (տարբերակները), որոնք Հանձնաժողովի որոշման նախագծի առարկան են եւ առկա են Միության անդամ պետություններում եւ միջազգային փորձում, ինչպես նաեւ գնահատել դրանց պրոգրեսիվության մակարդակը եւ Միության շրջանակներում վերազգային կարգավորում իրականացնելու համար կիրառելիությունը: Բացի այդ, Մշակող դեպարտամենտի կողմից կանոնակարգման այլընտրանքային տարբերակների պատշաճ կամ ոչ պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվությունը նշվում է ԿԱԳ-ի մասին յուրաքանչյուր եզրակացության մեջ:
	1.2. Յուրաքանչյուր որոշման նախագծի վերաբերյալ հանրային խորհրդակցության մասով՝ նվազագույնը ԵԱՏՄ անդամ 2 պետությունից հանրային խորհրդակցությունների մասնակիցների հեռակա կարծիքների (դիրքորոշումների) առկայությունը եւ	1.2. Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 156-րդ կետին համապատասխան՝ բացի Հանձնաժողովի որոշումների նախագծերը հանրային քննարկումների շրջանակներում Միության պաշտոնական ինտերնետային

	քննարկումների նվազագույնը 1 առկա ձեւաչափի (ժողով, մասնագիտական Խորհրդատվական կոմիտեի կամ դրա ենթակոմիտեների նիստ, փորձագիտական ֆոկուս խումբ, տեսահամաժողով եւ այլն) օգտագործումը՝ չհաշված ԿԱԳ-ի հարցերով Աշխատանքային խմբի նիստերը:	կայքում համընդհանուր իրազեկման համար տեղադրելը, Մշակող դեպարտամենտների կողմից իրականացվում է դրանց հասցեագրված ուղարկումը՝ - գործարար երկխոսության ազգային համակարգողներին՝ Միության անդամ բոլոր հինգ պետություններից. - ԿԱԳ-ի հարցերով Աշխատանքային խմբի անդամներին, այդ թվում՝ դրա կազմում ընդգրկված գործարար երկխոսության համակարգողների ներկայացուցիչներին՝ Միության անդամ բոլոր հինգ պետություններից. - մասնագիտական խորհրդատվական մարմնի (կոմիտեի, ենթակոմիտեի, աշխատանքային խմբի) կազմում ընդգրկված ձեռնարկատիրական եւ փորձագիտական համայնքի ներկայացուցիչներին. - այլ փորձագետների, որոնց, Մշակող դեպարտամենտի կարծիքով, նպատակահարմար է ներգրավել Հանձնաժողովի որոշման նախագծի մշակմանը: Ընդ որում, Համահավաք դեպարտամենտը կազմակերպում է նաեւ Հանձնաժողովի այն որոշումների նախագծերի ուղարկումը շահագրգիռ անձանց, որոնց նկատմամբ անցկացվում են ԿԱԳ-ի եւ նախնական հրապարակման ընթացակարգեր (հանրային քննարկումներ)՝ ճյուղային փորձագետներին, գործարար ասոցիացիաներին եւ համապատասխան ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին: Աշխատանքային խմբի նիստերից առաջ Համահավաք դեպարտամենտը գործարար համայնքի ներկայացուցիչների

		մասնակցությամբ կանոնավոր անցկացնում է խորհրդակցություններ (աշխատանքային խորհրդակցություններ): Բացի այդ, Հաշվետվության նախագծի 1-ին գլխի 1.1 պարբերության մեջ նշված է, որ 2015 թվականին, բացի Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված գործարար համայնքի ներկայացուցիչներից, դրա յուրաքանչյուր նիստին մասնակցել է Միության անդամ պետությունների գործարար համայնքի միջինը 2 լրացուցիչ հրավիրված ներկայացուցիչ՝ ճյուղային ձեռնարկատիրական միավորումներից եւ առանձին տնտեսավարող սուբյեկտներից, որոնք Հանձնաժողովի առանձին որոշումների նախագծերով շահագրգիռ անձինք են:
	1.3. ԿԱԳ-ի մասին եզրակացություններ տալու մասով՝ քանակական գնահատականների (մոդելների, հաշվարկների) օգտագործման տոկոսը՝ այս նպատակային ցուցանիշը 2019 թվականին հասցնելով մինչեւ 65%-ի (եւ դրանց առաջընթաց աճին՝ սկսած 2016 թվականից):	1.3. Հաշվետվության նախագծի 3-րդ գլխի 3.1.4 ենթապարբերության մեջ՝ որպես Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ անցկացնելու մեթոդաբանության կատարելագործման հիմնական ուղղությունն արդեն իսկ նշված է անցում կատարելը ԿԱԳ-ի անցկացմանը քանակական գնահատականների մեթոդների հիման վրա: Դրա հետ միասին, ներկայումս հնարավոր չէ սահմանել հստակ նպատակային ցուցիչներ ըստ Հանձնաժողովի այն որոշումների նախագծերի մասերի, որոնց նկատմամբ ԿԱԳ-ն անցկացնելու է քանակական գնահատականների օգտագործմամբ, քանի որ այս ցուցանիշի արժեքները կախված են Հանձնաժողովի որոշումների կոնկրետ նախագծերի վերաբերյալ վիճակագրական տվյալների առկայությունից, այդ թվում՝ Մշակող դեպարտամենտներից, ձեռնարկատիրական եւ փորձագիտական համայնքներից ստացվող:

	2. Առաջարկվում է Հաշվետվության մեջ արտացոլել Համահավաք դեպարտամենտի տեսլականը մինչեւ 2020 թվականն ընկած ժամանակահատվածը ԿԱԳ-ի մեխանիզմների զարգացման մասով («ճանապարհային քարտեզ»): Բացի ՓԱԳ-ի փորձնական անցկացումից, այս միջոցառումները կարող էին դառնալ ստանդարտ ծախքերի մոդելի (standart cost model) ներմուծումը, եվրասիական ԿԱԳ-ի եւ գործարարությամբ զբաղվելու պայմանների վերաբերյալ տեղեկատվական ռեսուրսի ստեղծումը, Հանրային քննարկումների մասնակիցների էլեկտրոնային ռեգիստրի ձեւավորումը (Եվրոպական կոմիտեի Transparency Register-ի համանմանությամբ), Հանձնաժողովի Մշակող մարմինների աշխատակիցների կանոնավոր ուսուցումը:	2. Հաշվետվության նախագծի 3-րդ գլխում նշված են մոտ ապագայում Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման կատարելագործման հետեւյալ հիմնական ուղղությունները՝ - ԿԱԳ-ի մեթոդաբանության զարգացում՝ գնահատման քանակական մեթոդների լայն օգտագործման ներդրման մասով. - ԿԱԳ-ի մասին եզրակացությունների նախապատրաստման ժամկետների երկարաձգում՝ 15 օրացուցային օրվանից 15 աշխատանքային օրվա. - ԿԱԳ-ի անցկացման տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքի կատարելագործում. - ԿԱԳ անցկացնելիս կիրառվող փաստաթղթերի ձեւերի դյուրացում. - Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու պիլոտային ծրագրի իրագործում: Բացի այդ, Հաշվետվության նախագծի 3-րդ գլուխը լրացված է Հանձնաժողովի որոշումների նախագծերի ԿԱԳ-ի թեմայով ուսուցողական սեմինարներ կանոնավոր անցկացնելու առաջարկով, այդ թվում՝ Միության անդամ պետությունների ձեռնարկատիրական եւ փորձագիտական համայնքի ներկայացուցիչների համար՝ արտագնա ձեւաչափով:

3	Ալեքսանդր Նիկոլայի Շոխին՝ «Ռուսաստանի արդյունաբերողների եւ ձեռնարկատերերի միության» (ՌԱՁՄ) նախագահ, Եվրասիական տնտեսական միության Գործարար խորհրդի ազգային համակարգող՝ Ռուսաստանի Դաշնության գործարար համայնքի կողմից (corp@rspp.ru)՝	
	1. ՌԱՁՄ-ն բարձր է գնահատում 2015 թվականին ԵՏՀ-ի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու մասով ԵՏՀ-ի Ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտի աշխատանքը: ՌԱՁՄ-ի կարծիքով՝ Հաշվետվության նախագծում առաջարկվում են կարգավորման ազդեցության գնահատման ընթացակարգի կատարելագործման կարեւոր ուղղություններ:	1. Մեկնաբանությունը դրական բնույթ է կրում, պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշման արտահայտում չի պահանջվում:
	2. ՌԱՁՄ-ն հավանություն է տալիս Հաշվետվության նախագծում պարունակվող առաջարկին՝ Աշխատանքային խմբի ղեկավարին վերապահել Հանձնաժողովի՝ սահմանված ընթացակարգերի էական խախտումներով իրականացված ԿԱԳ-ի մասին եզրակացություն նախապատրաստելու համար ներկայացված որոշումների նախագծերը Մշակող դեպարտամենտին վերադարձնելու իրավունքը: Աշխատանքային խմբի ղեկավարին նշված լիազորություններով օժտելու նպատակահարմարությունը հաստատվում է ՌԴ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 17-ի՝ «Գործադիր իշխանության դաշնային մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի նախագծերի, դաշնային օրենքների նախագծերի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումների նախագծերի փոփոխությունների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու կարգի, ինչպես նաեւ	2. Մեկնաբանությունը դրական բնույթ է կրում, պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշման արտահայտում չի պահանջվում: Դրա հետ միասին, տվյալ առաջարկը, ԵՏՀ կոլեգիայի՝ 2016 թվականի մարտի 29-ի՝ 12-րդ նիստի շրջանակներում քննարկման արդյունքների հիման վրա, հանվել է Հաշվետվության նախագծից:

	Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշ ակտերում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1318 որոշման (նշված Կարգի 29-րդ կետ) մեջ համանման նորմի առկայությամբ: 3. ՌԱՁՄ-ն անհրաժեշտ է համարում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջազգային պայմանագրերի նախագծերի ԿԱԳ-ի անցկացումը եւ հավանություն է տալիս Հաշվետվության նախագծում շարադրված փաստարկներին՝ հօգուտ նշված ընթացակարգի անցկացման: ՌԱՁՄ-ի կարծիքով, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջազգային պայմանագրերի նախագծերի ԿԱԳ-ը թույլ կտա բարձրացնել տվյալ նախագծերի որակը, ինչպես նաեւ կկրճատի գործարարության համար կարգավորիչ ռիսկերը: 4. ՌԱՁՄ-ն հավանություն է տալիս Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների նկատմամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա փաստացի ազդեցության գնահատում անցկացնելուն (այսուհետ՝ ՓԱԳ): ՌԴ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի «Նորմատիվ իրավական ակտերի փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշ ակտերում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 83 որոշմամբ 2016 թվականի հունվարի 1-ից նաեւ ներմուծվել է ՌԴ նորմատիվ իրավական ակտերի փաստացի ազդեցության գնահատման ընթացակարգը: Նշված ընթացակարգի անցկացումը վերազգային մակարդակով թույլ կտա վերանայել քիչ արդյունավետ իրավական ակտերը՝ ձեռնարկատիրական եւ այլ տնտեսական գործունեության մեջ չհիմնավորված պարտավորությունների, արգելքների եւ սահմանափակումների բացառման նպատակով: Անհրաժեշտ ենք	3. Մեկնաբանությունը դրական բնույթ է կրում, պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշման արտահայտում չի պահանջվում: Դրա հետ միասին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերի ԿԱԳ անցկացնելու վերաբերյալ առաջարկը ԵՏՀ կոլեգիայի՝ 2016 թվականի մարտի 29-ի՝ 12-րդ նիստի շրջանակներում, քննարկման արդյունքներով հանվել է որոշման նախագծից: 4. ՌԱՁՄ-ի սույն առաջարկները պլանավորվում են հաշվի առնել Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու մեթոդաբանության մեջ, որը կմշակվի Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից Հաշվետվության նախագծին վերջնական հավանություն տալուց հետո՝ ներառյալ Հանձնաժողովի որոշումների նախագծերի փաստացի ազդեցության գնահատման պիլոտային նախագծի իրագործման վերաբերյալ առաջարկը:

	համարում սահմանել, որ ՓԱԳ-ի պլանի նախագծի վերաբերյալ հանրային խորհրդակցությունների ժամկետը չի կարող լինել Միության պաշտոնական կայքում դրա հրապարակման օրվանից 20 օրացուցային օրվանից պակաս: Անհրաժեշտ է ապահովել հանրային քննարկման արդյունքների հիման վրա լրամշակված պլանի նախագծի, Հանձնաժողովի կողմից հաստատված պլանի, ինչպես նաեւ փաստացի ազդեցության մասին Համահավաք դեպարտամենտի կողմից նախապատրաստված եզրակացությունների տեղադրումը Միության պաշտոնական կայքում: Նաեւ առաջարկում ենք հանրային քննարկման արդյունքների հիման վրա լրամշակված պլանի նախագիծը, մինչեւ Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, քննարկել Աշխատանքային խմբի նիստում: Բացի այդ, նպատակահարմար ենք համարում սահմանել, որ ՓԱԳ-ի մասին եզրակացությունն ուսումնասիրվում է Կոլեգիայի նիստում, որում Կոլեգիան ՓԱԳ-ի մասին եզրակացության արդյունքներով կայացնում է որոշում՝ սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կատարելու կամ այն վերացնելու անհրաժեշտության մասին, ինչպես նաեւ ստացված եզրահանգումների հիման վրա նախապատրաստված այլ որոշումներ:	
	5. Հաշվի առնելով այն, որ առանձին ժամանակահատվածներում սահմանվում են երկարատեւ հանգստյան օրեր եւ ոչ աշխատանքային տոնական օրեր, առաջարկում ենք նախատեսել, որ այն ժամկետը, որի ընթացքում Համահավաք դեպարտամենտը նախապատրաստում է Հանձնաժողովի որոշման նախագիծը՝ ԿԱԳ-ի անցկացման մասով ԵՏՀ աշխատանքային խմբի նիստին ուսումնասիրելու համար եւ դրա արդյունքներով եզրակացությունը, հաշվարկվում է աշխատանքային, այլ ոչ թե օրացուցային օրերով:	5. Առաջարկը հաշվի է առնվել Հաշվետվության նախագծի 3.1.3 ենթապարբերության մեջ՝ Աշխատանքային խմբի կողմից ԿԱԳ-ի մասին եզրակացությունները նախապատրաստելու ժամկետները 15 օրացուցային օրվանից 15 աշխատանքային օր դարձնելու մասով:

4	Դանա Բեյսենի Ժունուսովա՝ Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի վարչության նախագահի տեղակալի ժ.պ.(b.umytbayev@palata.kz)՝ 1. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված ԵՏՀ աշխատանքի կանոնակարգի 151-րդ կետին համապատասխան՝ Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունման, դրանցում փոփոխությունների կատարման կամ դրանց վերացման, Միության ընդունված տեխնիկական կանոնակարգերը եւ Միության տեխնիկական կանոնակարգերի անցումային դրույթները գործողության մեջ դնելու մասին Հանձնաժողովի որոշումների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումը բաղկացած է Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման եւ վերացման՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով սահմանված փուլերից (ընթացակարգերից):	1. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԵՏՀ խորհրդի որոշման նախագծի (այսուհետ՝ որոշման նախագիծ) նկատմամբ անցկացվել է ԿԱԳ-ի ընթացակարգ եւ նախապատրաստվել է ԿԱԳ-ի մասին 2015 թվականի հունիսի 19-ի թիվ 10 եզրակացությունը:
	Սակայն Միության տեխնիկական կանոնակարգերը մշակելու, ընդունելու, փոփոխելու եւ վերացնելու կարգի նոր խմբագրությամբ նախատեսված՝ ԿԱԳ-ի ընթացակարգերը ձեւական բնույթ են կրում եւ չեն կարող ապահովել ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա բացասաբար ազդող դրույթների հայտնաբերման եւ վերացման արդյունավետ գործիք: Ներկայացված Կարգի նախագծով նախատեսվում է՝ - նախապատրաստման ժամանակ կարող են հաշվի առնվել միայն արձագանքների ամփոփագրում ներառված դիտողություններն ու առաջարկությունները, ինչն անհիմն կերպով սահմանափակում է	Հարկ է նշել, որ որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ ու առաջարկություններ, Աշխատանքային խմբի 2015 թվականի հունիսի 15-ի 4-րդ նիստի շրջանակներում այն ուսումնասիրելիս, Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի՝ Աշխատանքային խմբի անդամ հանդիսացող ներկայացուցչի կողմից չեն արտահայտվել: ԿԱԳ-ի մասին նշված եզրակացությունում առաջարկվել է մեկ փաստաթղթում միավորել բացատրագրով եւ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքով նախատեսված տեղեկությունները:

	ԿԱԳ-ի բոլոր փուլերում, այդ թվում՝ գործարար համայնքի Աշխատանքային խմբի անդամներից ստացված դիտողություններն ու առաջարկները հաշվի առնելը. - տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի միավորումը տեխնիկական կանոնակարգի նախագծի բացատրագրի հետ. - հարցաթերթիկների ամբողջական բացակայությունը. - ԿԱԳ-ի մասին եզրակացության բացակայությունը ԵՏՀ կոլեգիայի կողմից ուսումնասիրվելու համար ներկայացված՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի փաստաթղթերի ցանկից: Իր հերթին նշում ենք սույն դրույթների հետ անհամաձայնությունը, այդ թվում՝ հաշվի առնելով հետեւյալը՝ 1) տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը եւ Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի բացատրագիրը չեն կարող միավորվել մեկ փաստաթղթում, քանի որ ունեն կազմման լրիվ տարբեր նպատակներ: Այսպես, բացատրագիրը կրում է տեղեկատու, տեղեկատվական բնույթ եւ նկարագրում է տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների կազմն ու ընդհանուր բնութագիրը: Տեղեկատվական-վերլուծական տեղեկանքն ընթացիկ ԿԱԳ-ի տարր է եւ միջանկյալ վերլուծական	Ներկայումս որոշման նախագծում նախատեսված է, որ բացատրագրում ներառվում են տեղեկություններ կարգավորման բոլոր հիմնական որակական բնութագրերի վերաբերյալ, որոնք նախատեսված են Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 147-րդ կետով: Ընդ որում, նշված՝ ԿԱԳ-ի մասին եզրակացությունում Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մասով հարցաթերթիկների կազմման անհրաժեշտության մասին դիտողություններ չեն պարունակվում: Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի հանրային քննարկում անցկացնելու փորձը վկայում է այն մասին, որ շահագրգիռ անձինք դիտողություններ եւ առաջարկություններ արտահայտում են հիմնականում Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի կոնկրետ դրույթների, այլ ոչ թե ամբողջական նախագծի վերաբերյալ: Բացի այդ, Միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերի մասով ամբողջական նախագծի նպատակահարմարության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող հարցաթերթիկների կազմումն այնքան էլ արդիական չէ, քանի որ ապրանքների կոնկրետ տեսակների առնչությամբ Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի նախապատրաստման անհրաժեշտությունն արդեն իսկ կանխորոշված է Արտադրանքի միասնական ցանկում արտադրանքի համապատասխան այն տեսակը ներառելով, որի նկատմամբ սահմանվում են Միության շրջանակներում պարտադիր պահանջներ, ինչպես նաեւ հենց նախագիծը Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման պլանում

		ներառելով (ընդ որում, այս երկու փաստաթղթերն էլ հաստատվում են ԵՏՀ խորհրդի կողմից):
	Հաշվետվություն է, որի մեջ նշվում է մշակողի կարծիքը, այդ թվում՝ կարգավորման՝ տեխնիկական կանոնակարգի նախագծով նախատեսված հիմնական որակական բնութագրերի մասին: Այսպիսով, կարծում ենք, որ տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը պետք է ներառվի տեխնիկական կանոնակարգին կից փաստաթղթերի փաթեթում, ինչպես նաեւ պարունակի հետեւյալ տարրերը՝ - այն խնդրի նկարագրությունը, որի լուծմանն ուղղված է այդ տեխնիկական կանոնակարգի մշակումը. - այն անձանց շրջանակը, որոնց շահերի պաշտպանությանն ուղղված է տեխնիկական կանոնակարգի մշակումը. - կարգավորման հասցեատերերը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտները, եւ կարգավորմամբ նրանց վրա ցուցաբերվող ազդեցությունը, որը նախատեսված է տեխնիկական կանոնակարգի նախագծով. - այն ձեռնարկատիրական եւ այլ գործունեության սուբյեկտների, այլ շահագրգիռ անձանց համար տեխնիկական կանոնակարգով սահմանվող սահմանափակումների բովանդակությունը, որոնց շահերը կշոշափվեն. - այն խնդրի լուծման մեխանիզմը, որի լուծմանն ուղղված է տեխնիկական կանոնակարգի ընդունումը, եւ տեխնիկական կանոնակարգով նախատեսված կարգավորման նպատակին հասնելը (առաջարկվող կարգավորման եւ նշված խնդրի միջեւ	Որոշման նախագծում ձեւակերպված դրույթն այն մասին, որ ԿԱԳ-ի մասին եզրակացությունը նախապատրաստելիս հաշվի են առնվում միայն արձագանքների ամփոփագրում ներառված դիտողություններն ու առաջարկները, Համահավաք դեպարտամենտի կողմից հավանության չի արժանանում, ինչի մասին տեղեկացված է Մշակող դեպարտամենտը (ԵՏՀ տեխնիկական կանոնակարգման եւ հավատարմագրման դեպարտամենտ): Բացի այդ՝ Համահավաք դեպարտամենտը հավանություն է տալիս Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի առաջարկին՝ ԿԱԳ-ի մասին եզրակացությունը ԵՏՀ կոլեգիայի կողմից ուսումնասիրվելու համար Միության տեխնիկական կանոնակարգի նախագծի փաստաթղթերի ցանկում (փաթեթում) ընդգրկելու անհրաժեշտության վերաբերյալ (Համահավաք դեպարտամենտի տվյալ դիրքորոշման վերաբերյալ նույնպես ավելի վաղ տեղեկացվել է Մշակող դեպարտամենտը):

	փոխկապակցության նկարագրությունը). - այն խնդրի լուծման այլ հնարավոր եղանակների նկարագրությունը, որի լուծմանն ուղղված է տեխնիկական կանոնակարգի ընդունումը. - այլ տեղեկատվություն, որը, մշակողի կարծիքով, վերաբերում է տեխնիկական կանոնակարգի նախագծի վերաբերյալ հիմնական տեղեկություններին: 2) ԿԱԳ-ի ընթացակարգի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով նպատակահարմար ենք համարում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի նախագծերի ԿԱԳ-ի անցկացման ընթացակարգի ապահովումը հետեւյալ փուլերով՝ - ընթացիկ գնահատում. ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա տեխնիկական կանոնակարգի նախագծի ազդեցության հետեւանքների մասին տեղեկատվական-վերլուծական տեղեկանքի եւ տեխնիկական կանոնակարգի նախագծի հանրային քննարկում անցկացնելու համար հարցաթերթիկի (այսուհետ՝ հարցաթերթիկ) կազմում, ինչպես նաեւ դրանց հրապարակային քննարկում (լրացում). - վերջնական գնահատում. ԿԱԳ-ի մասին եզրակացության նախապատրաստում: Բացի այդ, նպատակահարմար ենք համարում Միության տեխնիկական կանոնակարգի նախագծին կից փաստաթղթերի փաթեթում շահագրգիռ անձանց ուղղված հարցերի ստանդարտացված ցանկ պարունակող հարցաթերթիկի ներառումը՝ նախատեսված այդ անձանց կողմից տեխնիկական կանոնակարգի նախագծի փորձագիտական գնահատական	

	ստանալու համար, այդ թվում՝ կարգավորման հիմնական որակական բնութագրերի մասով: 3) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի ԿԱԳ-ի մասին եզրակացությունը նախապատրաստելիս Աշխատանքային խումբը պետք է՝ - հաշվի առնի գնահատման բոլոր փուլերում գործարար համայնքի եւ փորձագիտական համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ անձանց կողմից ստացված դիտողությունները եւ առաջարկությունները. - անցկացնի ստացված լրացված հարցաթերթիկների վերլուծություն. - անցկացնի արձագանքների ամփոփագրում ներառված դիտողությունների ու առաջարկությունների վերլուծություն՝ Միության տեխնիկական կանոնակարգի նախագիծը մշակողի կողմից դրանք մերժելու կամ ընդունելու հիմնավորվածության մասով: Ընդ որում, համարում ենք, որ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի վերաբերյալ գործարար երկխոսության համակարգողների կոնսոլիդացված դիրքորոշման մասին տեղեկատվությունը պետք է ազդեցության գնահատման մասին եզրակացության մեջ պարտադիր արտացոլման ենթակա լինի: 4) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի նախագծերի դրույթներով նախատեսված կամ նշված դրույթների կապակցությամբ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների համար ծագող այնպիսի ավելորդ պարտավորությունների, սահմանափակումների եւ (կամ)	

	արգելքների, ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների այնպիսի չհիմնավորված ծախսերի բացահայտման եւ վերացման նպատակով, որոնք Միության տարածքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի համար խոչընդոտներ են ստեղծում, անհրաժեշտ ենք համարում ԵՏՀ կոլեգիայի կողմից ուսումնասիրվելու համար ներկայացված՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի փաստաթղթերի ցանկում ԿԱԳ-ի մասին եզրակացությունը ներառելը:	
	2. Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին հավանություն տալու (ներպետական համաձայնեցման ուղարկելու) մասին ԵՏՀ որոշումների նախագծերի նկատմամբ (Հաշվետվության նախագծի 3.1.3 բաժնի 3-րդ կետ) ՂՀ «Ատամեկեն» ՁԱՊ-ն արտահայտում է այդպիսի ակտերի նկատմամբ ԿԱԳ-ի ընթացակարգ անցկացնելու նպատակահարմարության եւ անհրաժեշտության մասին դիրքորոշում, այդ թվում՝ քննարկմանը Միության անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչների անմիջական ներգրավմամբ:	2. Մեկնաբանությունը դրական բնույթ է կրում, պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշման արտահայտում չի պահանջվում: Դրա հետ միասին, միջազգային պայմանագրերի նախագծերի նկատմամբ ԿԱԳ անցկացնելու վերաբերյալ տվյալ առաջարկը, ԵՏՀ կոլեգիայի՝ 2016 թվականի մարտի 29-ի՝ 12-րդ նիստի շրջանակներում քննարկման արդյունքների հիման վրա, հանվել է Հաշվետվության նախագծից:
	3. Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատման ընթացակարգի՝ որպես պիլոտային ծրագրի ներդրման մասին Հանձնաժողովի նախաձեռնության մասով՝ ՂՀ «Ատամեկեն» ՁԱՊ-ն իր կողմից հավանություն է տալիս սույն առաջարկին եւ նշում այդպիսի նորարարության ներմուծման նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը: Իր հերթին, նշում ենք Հանձնաժողովի ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատման նշված ընթացակարգն անցկացնելու համապատասխան մեթոդաբանության մշակման անհրաժեշտության մասին՝ տվյալ աշխատանքին ԵԱՏՄ անդամ	3. Առաջարկին հավանություն է տրվում: Պատասխանատու դեպարտամենտը պլանավորում է Հանձնաժողովի՝ ընդունված որոշումների փաստացի ազդեցության գնահատում անցկացնելու մեթոդաբանությունը մշակել Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից Հաշվետվության նախագծին վերջնական հավանություն տալուց հետո՝ ներառյալ Հանձնաժողովի որոշումների նախագծերի փաստացի ազդեցության գնահատման պիլոտային նախագծի իրագործման վերաբերյալ առաջարկը:

	պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչների ներգրավմամբ: 4. Հանձնաժողովի կողմից ընդունվող, ձեռնարկատիրական գործունեություն վարելու պայմանների վրա ուղղակիորեն ազդեցություն գործող որոշումների մշտապես աճող քանակի հետ կապված, ինչպես նաեւ հաշվի առնելով այն, որ, ըստ էության, Միության անդամ պետությունների գործարար համայնքը հնարավորություն չունի անցկացնելու Միության շրջանակներում ընդունված որոշումների համապատասխան դիտանցում, ՂՀ «Ատամեկեն» ՁԱՊ-ն առաջարկում է ԵՏՀ կոլեգիայի կամ խորհրդի մակարդակով ուսումնասիրել կարճաժամկետ եւ (կամ) հեռանկարային ժամանակահատվածների համար որոշումների նախագծերի մշակման պլանի մշակման եւ հաստատման հնարավորությունը՝ այդ պլանը համաձայնեցնելով ԵԱՏՄ անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչների հետ:	4. Հաշվի չի առնվել: Սույն առաջարկը չի համաձայնեցվում Հանձնաժողովի գործունեության պլանավորման մոտեցումների հետ, որոնք նախատեսված են Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով, որը հաստատված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից (2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշում): Այսպես, Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 56-րդ կետին համապատասխան՝ ԵՏՀ կոլեգիայի նիստերն անցկացվում են, որպես կանոն, շաբաթական առնվազն 1 անգամ՝ ԵՏՀ կոլեգիայի նախագահի կողմից հաստատված՝ հերթական կիսամյակի պլանի համաձայն: Ընդ որում, Հանձնաժողովի գործունեության պլանների մասին գործարար համայնքի տեղեկացվածությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի նշված կետով նախատեսված է, որ Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի կիսամյակային պլանները տեղադրվում են Միության պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ հենց պլանում պետք է բացահայտվի դրա մեջ ներառվող հարցերի ընդհանուր բնութագիրը (այդ թվում՝ տեղեկատվություն Հանձնաժողովի կողմից որոշումներ ընդունելու համար ներկայացվող իրավական կարգավորման առարկաների մասին):

	5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սահմանված ընթացակարգերի խախտումներով իրականացված կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն նախապատրաստելու համար ներկայացված ԵՏՀ որոշումների նախագծերը Մշակող դեպարտամենտին վերադարձնելու իրավունք վերապահելու Հանձնաժողովի առաջարկի կապակցությամբ (Հաշվետվության նախագծի 3.1.3 բաժնի 2-րդ կետ)՝ ՂՀ «Ատամեկեն» ՁԱՊ-ը նույնպես հավանություն է տալիս Հանձնաժողովի տվյալ նախաձեռնությանը:	5. Մեկնաբանությունը դրական բնույթ է կրում, պատասխանատու դեպարտամենտի դիրքորոշման արտահայտում չի պահանջվում: Դրա հետ միասին, տվյալ առաջարկը, ԵՏՀ կոլեգիայի՝ 2016 թվականի մարտի 29-ի՝ 12-րդ նիստի շրջանակներում քննարկման արդյունքների հիման վրա, հանվել է Հաշվետվության նախագծից:
	6. ԿԱԳ անցկացնելիս կիրառելի փաստաթղթերի ձեւերի եւ դրանք կազմելու հարցով, մասնավորապես՝ շահագրգիռ անձանց ուղղված հարցերի ցանկ պարունակող հարցաթերթիկի ձեւի մասով, հարցերի իմաստի տարբեր մեկնաբանումների բացառման նպատակով առաջարկվում է հարցաթերթիկի ձեւում կատարել համապատասխան փոփոխություններ առանձին հարցերը կրճատելու կամ վերաձեւակերպելու միջոցով՝ հաշվի առնելով գրական լեզվի նորմերը, իրավաբանական եզրութաբանությունը եւ իրավաբանական տեխնիկան: Համարում ենք, որ հարցաթերթիկի ձեւի հարցերը պետք է լինեն հնարավորինս հակիրճ եւ չկրեն ավելորդ իմաստային բեռ, այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների մոտ հիմնականում համապատասխան առանձնահատուկ գիտելիքների բացակայությունը:	6. Հարցաթերթիկի ձեւի լրամշակման անհրաժեշտության մասին առաջարկը հաշվի է առնված Հաշվետվության նախագծում (Հաշվետվության նախագծի 3-րդ գլխի 3.1.1 ենթապարբերության մեջ):
	7. Բացի այդ, Միության որոշումների՝ հաստատման համար առաջարկվող նախագծերի որակը բարձրացնելու եւ գործարարության վրա լրացուցիչ վարչական ծանրաբեռնվածության ավելացումը բացառելու նպատակով, ԵԱՏՄ անդամ պետությունների գործարար համայնքի ներկայացուցիչներին ԿԱԳ ընթացակարգերի	7. ԿԱԳ-ի թեմայով ուսուցողական սեմինարներ անցկացնելու առաջարկը, այդ թվում՝ արտագնա ձեւաչափով, հաշվի է առնված Հաշվետվության նախագծում (Հաշվետվության նախագծի 3-րդ գլխի 3.1.1 ենթապարբերության մեջ):

	իրականացմանն առավելագույնս ներգրավելու համար առաջարկվում է նաեւ ուսումնասիրել ԿԱԳ ընթացակարգերի իրազեկման միջոցառումների շրջանակներում գործարար միությունների եւ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների համար արտագնա թեմատիկ սեմինարներ կազմակերպելու հարցը:	

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Ձեռնարկատիրական գործունեության զարգացման հարցերով դեպարտամենտի տնօրեն 6 ապրիլի 2016 թվականի _____ Բ. Բ. Բեկեշեւ